

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

II ԴԱՍԱՐԱՆ

Կ Ա Ջ Մ Ե Զ
Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ



ԴԵՏԷՐԱՆ 1934 ՅԵՐԵՎԱՆ

431.548-88

25 JAN 2018

Հաստատված է ՀՍՍՀ Լուստոյկոմատի կողմից

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

II ԴԱՍԱՐԱՆ

Կազմեց՝ Մ. ԴՈՒՐԳՍՐԵԱՆ



ԳԵՏԱԿԱՆ • 1984 • ՅԵՐԵՎԱՆ

Պատ. խմբագիր՝ Մ. Մկրտչյան
Լեզվ. խմբ. Ա. Արստամյան
Տեխ. խմբ. Տ. Սարգսյան
Սրբադրժ. Գաբ. Հակոբյան

1. Հոկտեմբերիկին

Հոկտեմբերիկ, դու գանգրաժադ,
յերբ չափահաս մարդ կդառնաս,
կլինես ակտիվ քաղաքացի՝
և պայքարող, և շինարար:

Այժմ կարդա և զարգացիւր,
առաջ գնա արագ-արագ, —
չե՛ վոր քեզ ե վիճակվելու
այնքան փայլուն մի ապագա:

2. Մեր Լենինը

Լենինն ամեն տեղ հետևում ե մեզ
դասի ժամանակ, հանգստի պահին,
հետևում ե մեզ
մեծ ուսուցչի պես:

Արթուն աչքերով հետևում ե նա՝
նվ ե թույլ, անփուլթ, նվ ե ընդունակ,
նվ ե ծուլանում,
նվ ե սլանում:

Մենք խոսք ենք տալիս, ընկեր ղեկավար,
քո վեհ դրոշին լինել հարազատ,
մեր դասերի մեջ միշտ լինել առաջ,
միշտ լինել պատրաստ:

Հանձնված ե արտադրության 14 սեպտեմբերի 1934 թ.
Ստորագրված ե տպագրության համար 22 սեպտեմբերի 1934 թ.
Գլավիտ 8680, հրատ. 4013, պատվեր 1270, արժ. 50.000
Պետհրատի տպարան, Յերևան



11-2493071

3. Իլլիչի մանկութիւնը

1 Լենինի ծնողներ

Վլադիմիր Իլլիչի հայրը ժողովրդական դպրոցների տեսուչ էր՝ Նա աշխատում էր դպրոցների թիֆն ավելացնել, փորպեսզի չքավորների և աշխատավոր գյուղացիութան յերեւաններն ուսում ստանային։ Նա իրեն չէր խնայում և ամենավատ յեղանակներին անգամ շրջում էր հեռավոր վայրերը՝ դպրոցական գործերը կարգավորելու համար։

Վլադիմիր Իլլիչի մայրը բժշկի աղջիկ էր և մանկութիւնը դուրսում էր անցկացրել։ Նա գիտեր միջանի լեզու, լավ նվագում էր և իր ժամանակն անց էր կացնում տանը, յերեւանների հետ, վորոնք շատ էլին սիրում ու հարգում նրան։

Իլլիչի ընտանիքը շատ հաշտ էր ապրում։ Փոքրերը խաղում էին, սովորում, ծնողներն էլ ազատ ժամանակ զբոսնում էին նրանց հետ, խաղում կամ պատմում նրանց։

2 Փոքրիկ Վալուդյան

Վալուդյան անհանգիստ յերեւա յեր — ուրախ, կայտառ, չարաճճի։ Նա ու Վալուդի յելով և վատ էր բայում։ Վալուդ ընկնելիս, յերը գլուխը գետնին էր կպչում, Վալուդյան սկսում էր այնպէս գոռալ, վոր տունը տակն ու վրա յեր լինում։

Քրոջ՝ Ուլյայի հետ հաշտ էր, բայց սիրում էր հրամաններ արձակել։ Նրան քշում էր բազմոցի տակ ու հրամայում. «Բայրով մարդ — բազմոցի տակից»։

Մի անգամ ամառանոց գնալիս Վալուդյան գոռաց նավի վրա նստած տեղից. մայրն ասաց նրան.

— Նավի վրա գոռալ չի կարելի։

— Ձե՞ վոր նախ ինքն էլ է գոռում, — առանց կանգ առնելու գոռաց Վալուդյան։

Սաղալիքներով շատ չէր հետաքրքրվում, ավելի շուտ՝ կոտրատում էր։ Դասակը նրան յեռածի կառք նվիրեց։ Վալուդյան անհայտացավ իր նոր խաղալիքի հետ։ Շատ փրնտրելուց հետո, նրան գտան գոնեքից մեկի յետևում։ Լուռ կանգնած ու լրջությամբ պտտեցնում էր ձիւ վտանները, մինչև վոր մեկը մյուսի յետեից պոկոտեց։

3 Դպրոցի շեմին

Հինգ տարեկան էր, յերը մորից կարդալ սովորեց։ Ուլյայի հետ սկսեցին կարդալ հոր գրքերն ու աշխատքերը։ Անգիր էլին անում վոտանալորները։ Յերը յոթ տարեկան էր, Վալուդյան մեծ հաճույքով ու տարված արտասանում էր.

Հիմ-մ-ար հարուստը
գանձ ունի՝ չի քնում.
մերկ ու խեղճ աղքատը
յերգում է, զվարճանում։

Յերը կարդալուց ձանձրանում էլին, սկսում էին յերգել։ Մայրն էլ դաշնամուրի առաջ նստած նվագում էր.

«Կար չկար յերբեմն
մի աղքատ պառավ,
իր համար կաթնատու
նա մի այծ առավ
չալիկ-մալիկ,
կաթնատու այծիկ»։

Վալուդյայի փոքր յեղբայրը՝ Միայան չէր կարողանում առանց լացի յերգել այն մասը, յերը գայլերն ուտում են այծիկին։ Հենց վոր հասնում էին այդտեղ, չարաճճի Վալուդյան այնպիսի ուժեղ ձայնով էր սկսում յերգել ու նա-

յել յեղբոր աչքերին, վոր Միտայի սիրտը չեր դիմանում ու սկսում էր լաց լինել:

Չարաճճի յեր, բայց շատ ընդունակ էր. բոլորից շուտ էր վերջացնում դասերն ու սկսում էր դես-դեն ընկնել խանդարեր Այդպիսի դեպքերում հայրը կանչում էր.

— Ինչո՞ւ դասերդ չես սովորում.

— Յես դասերս գիտեմ.

Հայրն սկսում էր հարցնել. Վալտդյան հրաշալի պատասխանում էր. Հին դասերն էր հարցնում, վոր մի քիչ յերկար պահի. հին դասն էլ էր լավ հիշում ու պատմում:

Գիմնազիայի տեսուչը նրա մասին գրել էր. «շատ ընդունակ, աշխատասեր ու ճշտապահ տղա յե, միշտ էլ առաջին աշակերտն ե համարվել»:

4. Բրդոտ խաղընկերը

Պանդուկում նստած էր արջ պարածողը և ճաշում էր, իսկ արջը կապած էր դուռսը՝ սյունից: Նրա տեսքը սարսափելի յեր, բայց վոչ վոքի փնաս չեր տալիս:

Պանդուկի վերեւի սենյակում խաղում էին յերեք փոքրիկ յերեխա: Մեծը վեց տարեկան էր, իսկ ամենից փոքրը՝ հազիվ յերեք տարեկան:

Թրմիկ, Թրուխի, մեկն սկսեց բարձրանալ սանդուխտի վրա. Ո՞վ պիտի լիներ:

Հանկարծ դուռը լայն բացվեց, ու ահագին բրդոտ արջը մտավ ներս:

Յերեխաները սաստիկ վախեցան, ամեն մեկը մտավ մի անկյուն: Արջը մոտեցավ յերեքին ել, հոտոտեց իր լ. և զնչովը, բայց վոչինչ չարավ նրանց. «Յերեկ սա մի և Դժ

շուն ես», սիրտ առան յերեխաներն ու սկսեցին փաղաքշել արջին:

Արջը փովեց հատակին. փոքրիկն ընկավ նրա վրա, Թավալ էր տալիս ու խաղում:

Իսկ մեծ յեղբայրը բերեց իր Թմբուկը և սկսեց զարկել: Հենց վոր Թմբուկը Թնդաց, արջը տեղից վեր կացավ, կանգնեց յետևի Թաթերի վրա ու սկսեց պար գալ:



Մի ուրախություն էր վոր...

Իսկույն յերեխաներից ամեն մեկը վերցրեց մի-մի փայտ իբրև հրացան. արջին էլ տվին մի ավելի կոթ, վոր շատ ամուր բռնել էր:


Հիանալի ընկեր էին գտել: Ու իրար յետևից շարված՝ վոտնեղը խփում էին գետնին ու քայլում:

— Մեկ-յերկու, մեկ-յերկու...

Հանկարծ դուռը բացվեց, ու մայրը սարսափահար կանգնեց դռան մեջ: Յերեխաներից մեկն ուրախ-ուրախ գլխով արավ:

— Մայրիկ, տես, զինվոր ենք խաղում:

Հենց այդ վայրկյանին վրա հասավ արջ պարածողը...



5. Ի աշտերում

Մեր կոլտողի
դաշտերում
կյանքն ե աշխուժ
միշտ յեռում.
մշակում են
սպիտակ
քուլա-քուլա
լավ բամբակ,
ծխախոտ են մշակում,
թիթենիներ են տնկում:
Առվից — առու,
մարգից — մարգ
կոլտոգնիկներ
շարեշար
աշխատում են

յեռանդով,
ուրախ ու գոհ,
անվրդով:
Ժամանակ ե՛ր
քաղհանել.
աշխատավոր
բանվորներ
դուրս են գալիս
դաշտերը,
ինչպես կովոդ
վաշտերը,
պայքարում են
ու մրցում —
նոր, լավ կյանք են
կառուցում:

6. Փոքրիկ ձկնորսներ

Սեղան ու Պետիկը կարթը ջուրը զցել, ապաստում եյին
սրտատրոփ

Ընկած, ընկած, — բացականչեց Պետիկը

Քաշեցին... մի մեծ գորտ գուրս յեկած

Ե՛ր, դու միշտ խոսում ես ու ձկներին վախեցնում, —
բարկացավ Սեղան: — Տո՛ւր, յես զցեռ

Բավական սպասելուց հետո կարթը շարժվեց

— Հը՛ չասացի՞, դե հիմի տես, առաջ կեղտն
Քաշեց... ես անգամ դուրս յեկավ խեցեղեղին:



— Ես ել դու, — ծիծաղեց Պետիկը, — արե՛ հիմա միտ-
սին բռնենք:

Ու մի քարի վրա կանգնած՝ ապաստում եյին անհամ-
բեր կարթը շարժվեց, բայց այս անգամ այնքան ուժեղ,
վոր քիչ մնաց յերկուտն ել ջուրն ընկնելին:

— Ի՞նչ ես կարծում, ես անգամ լ՛նչ կլիսի, — հարց-
րեց Սեղան:

Անտառապահ Սարգիսը վորսորդութիւն շատ եր սիրում է միշտ հրացանով եր ման գալիս:

Աշնան մի որ նա անցնում եր անտառի ծայրով. վերեւից մի աղմուկ լսվեց: Նայեց — թռչունների յերամ եր: «Սագեր են», — մտածեց Սարգիսն ու նշան բռնեց, կրակեց. յերամից մի թռչուն ընկավ: Սարգիսը մոտեցավ նրան:

— Ձեռքս կտարվեր, այս ինչ արի: Ձե վոր սա կուռնկ ե, սագ չե. խեղճ թռչուն, — ասաց ու բարձրացրեց կուռնկին: Կուռնկի վոտքն եր վիրավորվեր:

— Վոչինչ, սիրելիս, յես քեզ կբժշկեմ, — ասաց նա ու վիրավոր թռչունին տուն տարավ:

— Տես, քեզ ընկեր եմ բերել, — ասաց նա իր աղջկան: Նազիկին դուր յեկավ կուռնկը. նա խոստացավ խնամել թռչունին մինչև միշտ աշուն, յերբ կուռնկի ընկերները նորից կանցնեն այդ կողմերից:

Այդ որվանից կուռնկը Նազիկի սիրելին դարձավ. նա սիրում եր և խնամում վիրավոր թռչունին:

Սկզբում կուռնկը չեր կարողանում յերկու վոտքի վրա կանգնել. վիրավոր վոտքը միշտ վերե եր պահում: Յերբեմն ել հենվում եր պատին, վոր վայր չընկնի:

Շուտով կուռնկը բոլորովին բնականացավ. հենց վոր Նազիկը կանչում եր, իսկույն գալիս եր մոտը. Նազիկը շատ գոհ եր:

Անցավ մի ամբողջ տարի:

Աշնանը, յերբ ելի չվում եյին թռչունները, ու նրանց

— Յես ասել եմ՝ մի մեծ իշխան ձուկ:

— Իսկ յես կարծում եմ՝ մի մեծ լոբո...

Ու վոգեորված սկսեցին քաշել:

— Մեկ, յերկու, յերեք — չափ եր տալիս Սեդան տնքալով:

Շատ քաշելուց հանկարծ թելը կտրվեց, ու յերկուսը միասին գետին գլորվեցին:

Կարթը մի մեծ կոճղի յեր դեմ առել:

7. Հասմիկի նամակը

«Իմ լավ տատի,

անուշ տատի,

վաղուց ես դու

հեռացել:

Ինչ կլինի՝

վերկենաս գաս,

յես քեզ շատ եմ

կարոտել:

Իմ լավ տատի,

անուշ տատի,

պիտեք եմ

հիմի յես,

դպրոց գնում,

մարզանք անում,

գիր եմ գրում

մեծի պես»:

Յե՛վ Հասմիկը

գրեց, գրեց,

լցրեց ամբողջ

մի յերես,

մին ել նայեց,

ապա ծալեց

ու ծրարի

մեջ դրեց:

— Ես ել հասցեն...

Ու Հասմիկը

յեկավ նամակն

ուղարկի,

գցեց փոստի

արկղը պատի,

գնաց դպրոց՝

պարապի:

յերամիսներն անցնում եյին Սարգսենց բակի վերեւից, կոռնկը լսում եր նրանց ձայները... նա բարձրացնում եր գլուխը, թափահարում թևերը և ուզում եր թռչել, բայց իզուր. վիրավոր վոտըը չեր թողնում: Բոլորն ել խղճում եյին կոռնկին, վոր չի կարողանում միանալ իր ընկերների յերամին:



Մի որ ել, յերբ նազիկը կերակրում եր կոռնկին, վերեւից, շատ մոտիկ, կոռնկների կռոտց լսվեց, Յերկուսն ել գլուխները բարձրացրին. կրոռնկների մի յերամ եր անցնում, կոռնկը թափահարեց թևերը, ուղղեց փետուրները և թռավ — բարձր ճիչ արձակելով:



— Թռավ, հայրիկ, թռավ իմ կոռնկը, — ուրախ-ուրախ բացականչեց նազիկը:

Նա գոհ եր, վոր կոռնկը գտավ ընկերներին, թեպետ ափսոսում եր, վոր բաժանվեց իր ընկերովից:

9. Անավերջ պատմություն

Պուտիկ, պուտիկ,
պուտպուտիկ,
շղարշ թևեր
խատուտիկ,

շողերի տակ
վառվռուն,
վորտեղ ծաղիկ՝
գու տիտիկ:

Ծակիկներից
հյուսթ ծծան,
տերևներում
ձու ածան:

Թիթեռնիկը
ձու ածեց,
տերևի տակ
ձու պահեց.
ցողուն, տերև
հովանի,
վոր թշնամին
չտանի:

Անցավ աշուն,
ցուրտ ձմեռ,
յեկավ գարուն
կենսաբեր:
Զվում բացվեց
ներսից դուռ
և լույս ընկավ
մի թրթուր:
Փոքրիկ թրթուր
անկշտում,
տերևներ ե
խփշտում,
ինքը աճում,
զորանում.
Ծառ ու ծաղիկ —
չոր անուն:

Փախում, չախում
կես արթուն,
իրեն թելով
փաթաթում,
քնում մոռ-մոռ
բոժոժում,
հարսնյակ դարձած՝
չի շարժվում:

Յեվ բոժոժում
քնած դեռ,
նա դառնում ե
մի թիթեռ,
խակույն անցնում
ե ուժի,
ծակում պատը
բոժոժի,
ու բոժոժից
լույս աշխարհ —
չորս թևանի
նախշ-նկար:

Պուտիկ, պուտիկ
պուտուտիկ,
շղարշ թևեր
խատուտիկ,
շողերի տակ
վառվռուն,
թը-թը թիթեռ
թախուն.

ծաղիկներին
հյուսթ ծծան,
տերևներում —
ձու ածան...

Ապա նորին
ձու ածում,
տերևի տակ
ձուն պահում...

Նորին աշուն,
ցուրտ ձմեռ,
նորին գարուն
կենսաբեր,
ձվում բացվում
ե մի դուռ,

լույս ե ընկնում
մի թրթուր...

Փոքրիկ թրթուր
անկշառում,
տերևներ ե
խփշտում:
Ինքը աճում,
զորանում,
ծառ ու ծաղիկ —
չոր անում...

Յեվ այսպես միշտ
ու անվերջ —
պատմությունը
չունի վերջ:

10. Գիքորի գրքերը


Գիքորը ուներ
բազմաթիվ գրքեր՝
անկազմ, ճղտած,
կողքերը պոկած:
Ուշք չեր դարձնում
նա իր գրքերին,
գրքերը կորչում,
փչանում ելին:
Մի անգամ կռվեց
ընկերով հետ նա,
գիրքը շարտեց

ընկերով վրա.
գիրքը գզգզեց,
թերթերը թռան,
ցիր ու ցան յեղան,
փչացան, կորան:
Գիքորը յեկավ.
Գիքորը քնեց.
սենյակում խսկույն
լուսթյուն տիրեց:
Յեվ Գիքորն ահա
տեսավ յերազում,

վոր լեզու առած
գրքերը խոսում,
զրույց են անում
նստած միասին,
իրենց անուրախ
զրույթյան մասին:

— Լսիր, «Դոն Գիշտո»,
ինչո՞ւ յես փոշոտ
— Վճնց ես ապրում,
«Շունն ու կատուն»,
մի ժամանակ
լավ ելիր դու:

— Ե՛յ «Ռոբինզոն» բարեկամ,
ինչո՞ւ կեղտոտ ես այդքան:
— Ո՛ւր ե կազմի, «Բա՛ջ Նազար» —
եդ ի՞նչ որի դու հասար:
— Բա ի՞նչ անենք, — հարցրին
զրույցիկները միասին:
«Դոն Գիշտո» թե՛ տղերք,
յեկեք փախչենք ուրիշ տեղ.
փախչենք ուղիղ գրադարան,
գորհ կլինենք անպայման:



Այնտեղ չեն թողնի,
վոր մեզ գզգզեն,
մեր գանգառները
այնտեղ կլսեն:

— Ի՛նչ, առա՛ջ, — ասաց
«Դոն-Գիշտո» քա՛ջ,
ու յերթի յելան
գրքերը հանկարծ:

Առավոտյան գրքերն ուրախ
իրենց շուրջը նայեցին
մաքուր կազմած, իրար գողբի,
պահարանում շարված խելա,
գրքերն ահա նայում են լուռ,
ժպտում են գոհ ու հանդիստ:

11. Ճնճղուկն ու ծիծեռնակները

Մի անգամ յես կանգնած եյի բակում և դիտում եյի
կտրի տակ գտնվող ծիծեռնակների բունը: Յերկու ծիծեռ-
նակներն ել թռան, և բունը դատարկ մնաց:

Այն ժամանակ, յերբ նրանք բացակայում եյին, կրա-
րից մի ճնճղուկ թռավ դեպի բունը, նայեց շուրջը, թևերը
թափահարեց ու մտավ բունը: Հետո այնտեղից դուրս հա-
նեց իր գլխիկն ու սկսեց ծլվլալ:

Իրանից հետո շուտով վերադարձավ ծիծեռնակներից
մեկը: Նա ուղեց մտնել բունը, բայց հենց վոր տեսավ հյու-
րին, ծվծվաց, թևերը թափահարեց ու թռավ:

Ճնճղուկը նստել ու ծլվլում եր:

Հանկարծ դեպի բունը թռավ ծիծեռնակների մի յերամ: Բոլոր
ծիծեռնակները մոտեցան բնին, կարծես թե ճնճղու-
կին տեսնելու, և նորից թռան, գնացին:

Ճնճղուկը չեղ վախենում, շրջում եր գլուխն ու ծլվլում:

Ծիծեռնակներն ելի թռան բունը, ինչ-վոր բան արին
ու ելի գնացին:

Ծիծեռնակներն իզուր չեյին դալիս: Նրանցից ամեն
մեկը կտցով ցեխ եր բերում ու ծեփում բնի մուտքը:

Նորից գնում ու գալիս եյին ծիծեռնակները, ծեփում
եյին, ու բնի մուտքն ավելի ու ավելի յեր նեղանում:

Սկզբում յերևում եր ճնճղուկի վիզը, հետո՝ արդեն
միայն գլուխը, հետո բթիկը և՛ բիշ հետո՝ ել փոշին: Եր
յերևում:

Ծիծեռնակները բալորովին ծեփեցին բունը, թռան և
ծլվլեցով ճախրում եյին տան շուրջը:

12. Կաղնու տնվորները

Մեր ծեր կաղնին իր հին տունը
սպել և չորս տնվորի:

Արմատի մոտ՝ ներքնատունը
մուկն և բռնել այս տարի:

Ատաղձագործ Ժիր փայտփորը՝
ցածի հարկի խանութում
աշխատում և ամբողջ որը —
թակում, կտցում, ծակոտում:

Իսկ վերևի հարկում նեղլիկ
շեկ սկյուռն և բնակվում՝
կաղին, ընկույզ, սերմ ու հատիկ
դիզած իր լի փշակում:

Թավ ճյուղքումը դրել և բուն
մի դիլ յերգիչ դուրալի
ու ճլվլում և որն ի բուն
իր յերզը սրտալի:

13. Հրդեհից ազատող շներ

Հաճախ պատահում է, վոր հրդեհից վառվող տանը յերեսաներ են մնում և նրանց դուրս բերել հնարավոր չէ, վորովհետեւ վախից թագնվում են ու լուռ, իսկ ծխի միջից չեն յերևում։ Դրա համար կան ընտելացրած շներ։ Այս շներն ապրում են հրդեհաշէջների մոտ, և յերբ մի վորեւ տան հրդեհ է լինում, նրանք շներին ուղարկում են մանուկներին ազատելու։ Մի այդպիսի շուն ազատել է տասներկու յերեսաւ նրա անունը Բոր էր։

Մի անգամ տունը վառվում էր։ Յերբ հրդեհաշէջներն յեկան այդ տունը, մի կին վազեց նրանց մոտ։ Նա լալիս էր և ասում, վոր տանը մնացել է իր յերկու տարեկան աղջիկը։ Հրդեհաշէջներն ուղարկեցին Բորին։ Բորը վազեց սանդուխքով և չքացաւ ծխի մեջ։ Հինգ բոպեյից հետո դուրս թռավ տանից ու բերեց աղջկան, ատամներով նրա շապիկից բռնած։ Մայրը գրկեց աղջկան ու լաց էր լինում ուրախությունից — աղջիկը կենդանի յեր։ Հրդեհաշէջները փաղաքշում էին շանը և զիտում նրան — արդյոք չի վառվել։ Սակայն Բորն ուզում էր ելի ներս վազել։ Հրդեհաշէջները կարծում էին, թե տանն ելի ինչ-վոր կենդանի բան կա ու թողին։ Շունը ներս վազեց և շուտով դուրս յեկաւ, ատամներով ինչ-վոր բան բռնած։ Յերբ մարդիկ զիտեցին այն, ինչ վոր նա բերել էր, ծիծաղից թուլացան։ Շունը մի մեծ տիկնիկ էր բերել։

14. Առյուծն ու աղվեսը

(Առակ)

Առյուծը ծերացել էր. թաթերը թուլացել էին, ատամները՝ թափել, և չէր կարողանում վորս բռնել։ Նա մտա-

ծեց խորամանկությամբ վորս ճարել։ պահեց քարայրում ու հիվանդ ձկացաւ։ Գաղանները գալիս էին նրան տեսնելու։ Բայց վոչ վոք յետ չէր դառնում։ Առյուծը բռնում էր նրանց և ուտում։

Յեկաւ վերջապես աղվեսը, կանգնեց քարայրի մուտքի առաջ և հարցրեց.

— Ինչպէս է առողջությունդ։

Առյուծը պատասխանեց.

— Վատ է. ինչո՞ւ ներս չես գալիս, բարեկամս։

Աղվեսը պատասխանեց.

Կգալի, բայց տանդ շուրջը թողած հետքերն ուրիշ բան են ասում։ շատերն են ներս մտել, իսկ դուրս վոչ վոք չի յեկել։

15. Ծիտն ու ծիծեռնակը

Ծիծեռնակը

աշու նքին

յեկաւ, ասաց

ծիտիկին.

— Յե կ, քեզ տանես

տաք հարաւ,

ուր չես յեղել

դու բնաւ

Մնաս եստեղ

ի՞նչ անես,

վոչ կեր ունես,

վոչ պաշար,

վոչ ել բունդ

և հարմար։

— Ե՛հ, բան չունես,

բուրիկ ջան,—

ասաց ծիտը

ճկճկան.—

Ի՞նչպէս գնամ

հեռու տեղ.

թեք չունամ

յես ու ժեղ։

Յեզ հզ կտա

հարավում

մի տաք անկյուն՝

իբ բնում.

Հացի փշրանք,

կամ ձաւար

բավական ե
ինձ համար:
Հոկտեմբերիկ,
պիտներ,
թե տղա, թե

աղջիկներ,
ձմռան սաստիկ
որերին
կուշտ կեր կտան
ծտերին

16. Սանիտար շունը

Տաք կովից հետո մենք քշեցինք սպիտակներին. յես վերավոր եյի—յես եյի ընկել: Արյունաքամ եյի յեղել, թուլացել:

Մերոնք հեռացել են, չեմ տեսնում նրանց, չեմ լսում ձայները:

Ջրամանս դատարկել եմ, ըայց ելի այրվում եմ ծալակից... վերքս ցավում ե...

— Կմեռնեմ, — անցնում ե մաքրվա:

Յերկու որ եր անցել. հույսս կտրել եյի. հանկարծ



շան հաջոց եմ լսում. ուրախությանս չափ չկա. միայն վախենում եմ—չլինի շունը թողնի ինձ՝ անցնի...

Վնչ, նա մոտեցավ, գտավ ինձ. ինքն ել ե ուրախացել, լիզում ե աչքերս, քիթս, ուրախ կլանչում ե:

Նա սլառկեց կողքիս, մեջքը դեմ արեց. մեջքին պալուսակ կար—կարմիր խաչով: Յես ձեռքս յերկարացրի,

մի կերպ յող ու բինտ հանեցի, վերքս կապեցի: Շունն ել շսպասեց. նա անհարտացավ. յես այլևս չեյի անհանգստանում. զիտեյի, վոր նա գնաց ոգնություն կանչելու:

Յեվ այդպես ել յեղավ. կարճ ժամանակից հետո ինձ մոտ յեկան կարմիր բանակային սանիտարները. շունն առաջնորդում եր նրանց:

Ինձ դրին պատգարակի վրա ու տարան:

Սանիտար շունն ինձ փրկեց մահից:

17. Հրշեջներ

Զրնգ-հնգ-զրրընգ,
տրոն-տոն-տոն-տոն...

հանկարծակի

լսում ես դու:

Փող են հնչում

ու ահագանգ.

յետ ես շրջում,

տեսնում՝ զրանք

հրշեջներն են

շարքով նստած —

գլխարկները

վոսկեգոծած:

Յեվ շփոթված՝

կառք ու անցորդ

լայն ճամբա յեն

տալիս նրանց,

վոր շուտ հասնեն

վնչ մի վայրկյան.

պետք ե հասնեն

շուտ ոգնության:

Ո՛վ իմանա՝

հանկարծ վորտեղ

ծագեց հիմա

հրդեհ ահեղ:

Ո՛վ իմանա՝

ծխի միջում

բանի՞ մարդ ե

գոռում, գոչում:

Դրա համար

վեր են թռել,

զրահավառ

ավտո նստել

ու սրընթաց

ճամբա ընկել,

վոր շուտ հասնեն

տեղն աղետի,

ոգնության գան —

ուր ել լինի:

18. Հոկտեմբեր

Հոկտեմբեր ե, թեև աշուն,
թեև մշուշ, մռայլ ու թաց,
տերևները դեղնած, նախշուն,
քամու թևով թափվում են ցած,

բայց վառվում է մեր սրտերում
զարնանային մի վառ արև,
կամք ներշնչում, հրահրում՝
անվերջ կռիվ ու պայքարել:

Ու մենք ահա այսօրն տարի,
Հոկտեմբերի տոնն ենք տոնում,
ու տոնելով նոր պայքարի,
նոր գործերի հիմք ենք դնում:

Մեր կուռ շարքերն այսպես սեղմած,
ընթանում ենք նորից, նորից,
հին աշխարհը ծեր, զառամած
նահանջում է մեր գրոհից:

Մեր լենինյան բանակն ահա
այն ժամանակ դադար կառնի,—
վողջ աշխարհի, յերկրի վրա
Հոկտեմբերը յերբ սավառնի:

19. Նազե

1

Քրդուհի Նազեն կոլտնտեսական Մամլի աղջիկն է
Յերբ առաջին անգամ նա զնաց զալրոց, ուսուցչուհին
հարցրեց.

— Քո անունն ի՞նչ է.

— Նազե.

— Հորդ անունը.

— Մամլի.

— Ինչպե՞ս պետք է գրես ազգանունդ, — հարցրեց
ուսուցչուհին:

Նազեն դժվարացավ պատասխանել:

Այդ ժամանակ ընկեր Շարին ասաց, — ազգանունդ
պետք է գրես այսպես՝

— Նազեա Մամլի, վոր նշանակում է Նազեն Մամլու
աղջիկն է:

2

Նազեա Մամլին այժմ գրել-կարդալ է սովորել. նա
կարդում է քրդերեն «Նոր ուղի» թերթը:

Դեռ ավելին՝ նա իր մայրիկի հետ պարապել է և նրան
գրագետ դարձրել:

Դրա համար մայրը՝ Գոզեն միշտ իր աղջկանը գովում
է ու հարվածային անվանում:

Գյուղի յերեխաները նրան ճանաչում են վորպես հար-
վածային Նազեա Մամլուն:

3

Գարունը մոտենում է:

Կոլտնտեսության կռիվն ու վոլխարներն սկսել են
ծնել:

Կոլտնտեսականների աշխատանքի ամենայնուհեմ շր-
ջանն է:

Յերեխաները հետ չեն մնում ծնողներից: Հիմիկվանից
Նազեն, Շամեն, Ղադըր պատրաստ են իրենց ծնողներին
ողնելու, նրանք այնպես ուրախ են նոր ծնված գառներին
և ուլիկներին պահպանելու համար:

Նազեն ուրախ փաթաթվում ե մորն ու ասում՝ դա ե
(մայրիկ) ջան, տես՞մը մենք հիմա ինչքան-ինչքան գառ-
ներ, ուլիկներ ունենք, իսկ անցյալ տարի իսկի չունեյինք:

— Հասա, բալիկ, ճիշտ ես ասում, մենք անցյալ
տարի քոչվոր եյինք, էդտեստեսական չեյինք, շեն մնա մեր
կոլխոզը, վոր ազատեց մեզ են զրությունից... Ասում եր
մայրը, աղջկա ճակատը համբուրելով:

Նազեն խոսառցավ իր մայրիկին՝ կոլտնտեսության
յերեխաների հետ միասին այնպես լավ խնամել գառնե-
րին, ուլիկներին ու հորթերին, վոր նրանցից վորեն մեկը
չմեռայի:

Նազեա Մամլին այժմ յեռանդով աշխատում ե:

20. Տրամվայ

Հեյ, տրամվայ, տրամվայ,
վոնց ե տանում վայրեց վայր,
բանվոր, վարպետ, աշակերտ,
ինչ ուշացում, ել ինչ հերթ:

Յեթե նստել իմացար,
Յերևանը ծայրե-ծայր
հենց մի ժամում կըրջես,
ուզած տեղդ կթռչես:

Այդքան արագ անց ու դարձ,
այդքան եժան համբու վարձ,
այդքան դործի յեռ ու դեռ
այտակոթի եր տեսել դեռ:

Մարդիկ, ինչպես իրենց տան,
նստում են լուրջ, շարեշար,

ու կոնդուկտորը շարժման
տալիս ե ազդանշան:

Այսպես շարքով ու կարգով,
ներսում նստած մարդկանցով
իրար կցված վագոններ
սլանում են դույզ դժով —
անցուղարձը ազմկոտ
տեսում ե մինչ ուշ գիշեր...

21. Պղնձի հանքերում

1

Ալեքսերն աշխատում եր Հոկտեմբերյան հանքերի ամե
նագծվարին մասում: Նա հողաշերտից 400 մետր ցածր եր:
Մութն եր այնտեղ, չկար ելեկտրական գիծ ու սարքավո-
րում. դրա համար ել կոչվում եր «Կույր շախտ»:

Վոչ միայն մութն եր այնտեղ, այլև խիստ ջրառատ:
Ջուրն ու ցեխը հաճախ ծածկում եյին աշխատողների
վոտքերի թաթերը, դրա համար ել «Կույր շախտում» աշ-
խատում եյին ուսինե յերկարավիզ կոշիկներով:

Ալեքսերի ընկերներն եյին՝ Ռիզան, Փոման, Յուլալը:
Վերեից անընդհատ ջուր եր թափվում, հաճախ անձրևի
պես հորդ: Կաթող ջուրը մեկ-մեկ ընկնում եր Ալեքսերի
ջոճրակին և սարսուեցնում նրան:

Վեց ամսից ավելի յեր, ինչ Ալեքսերն ու ընկերներն
աշխատում եյին այդ հանքամասում: Վեց ամսվա ընթաց-
քում Ալեքսերը «Կույր շախտում» ցույց եր ավել նվիր-
վածություն և արդյունավետ աշխատանք: Նրա անվան գի-
մացը գործալքման կամ ուշացման վոչ մի դեպք չեր գրված:
Յերբ Ալեքսերի անունը գրեցին կարմիր տախտակին, նա

ս' գրում չհասկացավ. մոտեցավ հին բանվորներից մեկին ու հարցրեց.

— Հայրենակից, սրա ողուտն ինչ է:

Բանվորը ժպտադեմ պատասխանեց.

— Ինչ ասեմ. սա մի մեծ բան է.

Ալեքսեյերը հրձիկաց, բայց չկարողացավ պատկերացնել այս «մեծ բանի» ելությունը:

Հանդիսավոր ժողովում Ալեքսեյերին ընծայեցին կենդանի փոքրիկ արձանը և յերեք մետր կերպաս: Արձանը դրեց իր սլառու հանր, զրամոֆոնի կողքը. ամեն անգամ տուն մտնելիս ավանդությամբ նայում էր արձանին: Իսկ կերպասը խնամքով ծալծից ու զույնզգույն սնդուկը դրամի իր կնոջ համար պահեց:

2

Ֆոման տեսնելով Պարսկաստանից յեկած ընկերոջ նվիրված աշխատանքը, ինքը նույնպես թե և քան ասեմ կերպ աշխատում յետ չմնալ Ալեքսեյերից:

— Իրանում ինչ արեւ եր, — ասաց մի անգամ Ալեքսեյերը և ինքն իրեն շարունակեց. — արեւ եր, համա ողջաստեփյունն ել գոռ եր:

— Ել ինչո՞ւ ընտանիքդ չես բերում, — հարցրեց Ֆոման:

— Պիտի բերեմ, ել ճար չկա: Են հայրենիքը չեմ ուզում. սովի ազդատութեան հայրենիքն իմը չի:

— Արանից ել լավ հայրենիք, — ավելացրեց Ֆոման, — ինչդ և պակաս. յերկիրը քոնը, իշխանութիւնը քոնը. ինչ քան լավ աշխատես, ենքան լավ կապրես:

— Հա՛, — բացականչեց Ալեքսեյերը. — առաջ վոր ասում եյին, չէ՛յի հապատում. Համա, այ ընկեր Ֆոմա: աչքովս տեսա, վոր եղպես եւ կալ աշխատեցի, լավ ապրեցի, լավ ստացա. Ալեքսեյի համար խառ կտոր տվին: Այ Ալեքսեյեր,

Իրանում դու ինչո՞ւ խառ կտոր կտանայիր: Քար եյի ջարդում, որական քսան ժամ, ելի քաղցած, ելի Ալեքսեյ մեղկ, ելի Զեյնաբը հիվանդ:

Զնայած խոսակցութիւնը հաճելի յեր, բայց կարճ տևեց. Յերկու հանքափորներն ել զգում եյին, վոր խոսքը և քլունգը թշնամիներ են. յեթե մեկն աշխուժանա, մյուսը յետ կմնա, ու վորովհետեւ յերկուսն ել ցանկանում եյին, վոր քլունգները միշտ առաջ լինեն, միշտ հաղթող, ուստի լռեցին:

Ալեքսեյերը չափում էր ժայռի դիրքն ու հարկածում ուժգին: Ծերակից կախված կարբիդի լապտերը ուղղում եր: Լույսի շիթերը բեկվում եյին կապույտ ժայռերի վրա ու շողողում ջրերի յերեսին: Քարերը սիւժին եյին տալիս, քլունգներն իջնում եյին ծանր ու դժվարին:

22. Բրուտանոցում

Յեռ և իմ ընկեր Մնուոն հաց ենք տանում նրա հոգ՝ բրուտ Ավադի համար: Գունավոր թաշկինակի մեջ Մնուգիդին փաթաթել ե լավաշ, սխտորած լոբի, մի քանի վալունդ և մի քիչ պանիր:

Բրուտի արհեստանոցը յեքիու մասից է. առաջինն ավելի ցած մյուսից. այս մասում «չարին» ե, ջրի կուժը և կալը: Յերկրորդ մասում դեռ չթրծած կփեր են շարած:

— Այ արևնիդ կծեմ, յեկանք, — կանչում ե բրուտ Ավադը իր թափ, կրճալին ձայնով:

Յեվ, կարծես ուրախացած, ավելի արագ և շարժում ձեռքերը: Նրա վոսկրոտ մատների արանքից հոսում ե լարծուն կավը, ապա մատները գրկում են կավե սյունը: Դառնում ե շարքը, ձգվում ե կավե սյունը, բարակում,

ապա նստում ե նրա բռունցքի տակ Սյա անդամ ձեռքը
թաթախում ե կավաջրի մեջ և կոխում կավե գնդի մեջ:

— Ես ե, հա,— և ճղիում ե կավը, թռչում են ցե-
խաջրի շիթերը.— ես կուծն ել պրծնեմ,— և տնքում եր
բրուռը, ամբողջ ուժով սեղմում կթի ներսը:

Արդեն չարխի վրա ֆուռում ե կթի նման մի բան:
Վոսկրոտ մասները սեղմում են վիզը, և հլու կավը ձգվում
ե, բարակում ե կթի վիզը: Մնաց ունիլը շինի և վոսկորով
նախշի կողերը:

Յեռ տեսնում եմ՝ ինչպես ե հագցնում ունկը, հանում
ե հին վոսկորները, վորոնցով նրա պապերը կթերի վրա
գծել են նույն նախշերը:

Իսկ չարխը շարունակ դառնում ե, բրուտի աջ վոտքը
իջնում, բարձրանում. ապա չարխը դանդաղում ե, ձեռքերը
սլուկում են կուժը և բարձր պահում:

— Բարի վայելում,— նույն ակնթարթում ասում ե
բրուտ Ավագը և դուրս ե գալիս իր տեղից:

23. Հին դպրոցը

Դասարանում... ծիրանի ծառը ստվեր ե գցել տի-
րակիս վրա: Արևի շողը փայլվում ե մատիտի ծայրիս...
մեկը բռնում ե թև:

— Մեծատառ Ժ-ն վաճառ ե:

— Ե...:

— Մի շվի կտամ:

— Ա՛յ, տես,— և ցույց եմ տալիս:

— Վերջին նոտարան, լուսթյուն,— սաստում ե ամ-
բիոնին կռթնած ուսուցիչը: Ճոռում են նրա կոշիկները:

Մենք թեպետ վայելչագրության տետրերի վրա յենք կրթ-
նել, բայց զիտենք, վոր նա դեպի մեզ ե դալիս:

Շատ ե խանդարում ծիրանի ծառը, վոր բուսել ե մեր
դասարանի միակ պատուհանի առջև: Յերբ վիշում ե քա-
մին, աղմկում ե ծառը, ճղներով թրխկացնում պատուհանը:

— Վազիր, դանգը տուր,— և որսալահը թռնում ե
տեղից:

Սկսվում ե ամենից զվարթ և աղմկալի յերկու բողեն,
մինչև զանդը հնչի և վաղենք բակը: Բոթում ենք իրար,
կամթում, մի խոսքով յեք ե ստանում հոգնությունից և
ակամա լուսթյունից զսպած մեր զվարթությունը:

Ներս ե մտնում ավագ ուսուցիչը: Վոտքի յենք կանգ-
նում: Մինչև շաբաթվա վերջը թռչակ չբերողը կհեռացվի
դասարանից: Ավագ ուսուցիչը զլուխը բարձրացնում ե,
նայում լուռ դասարանին: Ապա նա հեռանում ե: Կապույտ
զլորուսը պտտվում ե աշխարհագրության դասաստվի ձեռ-
քին, և մենք խմբով կրկնում ենք.

— Յերկրագունդը կլոր ե...

Յերեկո յե... մի կով աղիողորմ բառաչում ե... գլուղը
գիտե, վոր բառաչողը Նարգիզն ե, վորի հորթը քարոյն ե
ընկել: Կովը լիզում ե խոտով լցրած հորթի մորթին և չի
զգում անասնական ջերմություն:

Անա զիզին կթում ե բառաչող Նարգիզին, խոստում ե
նրա հետ, աղաչում, և կ-վը հանգարտում ե, կարծես հաս-
կանում ե նրա լեզուն:

— Նանի:

— Հե՛յ:

— Բա թռչակն ուզում են: Վարժապետն ասել ե...

— Նանին քեզ մատաղ, Նարգիզն ել ցամաքել ե, վոր
կաթը ծախենք: Սպասի, հեբդ կթերը կտանի, կծախի...

Իսկ ուսուցիչը պահանջում ե վայելչագրության տետրը:

— Յնա ուսումնարանն չեմ գնում, — ասում է նա տուած
վոտյան:

Բայց Անա զիզին թախանձում է.

— Անդո, նանին քեզ մատաղ, հրեա հերդ կժերը
կտանի, կծախի...

24. Յորնատերն ու Ջաղացպանը

1

Մեկը ցորեն տարավ Ջաղաց,
եդ ցորենից ալուր աղաց.
Ջաղացպանն ել բաղարջ յեվեց,
թոնրից հանեց, մեջտեղ դրեց.
— Արի պատմենք մի-մի լավ բան.
ու՛մը լինի սուր, դուրեկան, —
ես բաղարջը թող նա ուտի,
ու չնայենք զորթի, սուտի:

2

Յորնատերը՝ թե յես կասեմ,
Ջաղացպանը՝ յես կլսեմ:
— Մենք ունեյինք մի մեծ աքլար,
վորին նման մի տեղ չկար.
հերու յեր, թե մեկել տարին,
քեռիս հեծավ եդ աքլարին,
գնաց Լոռի՝ ցորեն բերի:
Ճանապարհին — չի նկատում —
մի գայլ ձիու կողքն է ուտում,
գնում քեռիս ուռ է բերում,

ու աքլարի կողը գործում,
նորից հեծնում եդ աքլարին,
ման է գալիս կլոր տարին,
ու հազար փութ ցորեն բարձած,
ինքն ել բեռան վրա նստած,
գալիս կանգնում է մեր դռան:
Մենք շինեցինք մի յելարան,
յելանք, քեռուս ներքև բերինք,
բեռով ցորենն ել ներս դրինք:
Ե՛ն ցորնիցն է, վոր դու անա
ես բաղարջն ես թխել հիմա:

3

Ջաղացպանը՝ թե յես ասեմ,
յորնատերը՝ յես կլսեմ.
— Մենք ունեյինք մի մեղրաճանձ,
համ պող ուներ, համ ել աղանջ.
մեկ որ ճանձը վախավ տանից,
հորս պարապ արավ բանից.
հայրս քրտնած դարձավ գեղը,
մորիցս առավ մեծ ասեղը,
տարավ տնկեց գոմի կտրան
ու գույգ վոտով յելավ վրան.
տեսավ հեռուն, դաշտի միջին,
վոր գութան են լծել ճանձին:
Տուն տնովի դաշտ վազեցինք,
պոչից բռնած տուն քշեցինք:
Տրորել եր ճանձն իր ուր.
Ջարգեց մայրս տան ընկուղը
ու ընկուղից հանած յիղը
քսեց ուռի ցաված տեղը:

Իսկույն ուսից բուսավ մի ծառ,
 ծառին իջավ ագռավը թառ.
 մի հողի կոշտ ախպերս առավ,
 են ագռավին վրա արավ.
 կոշտը ցրվեց, դարձավ մի հող՝
 մի որավար վարելահող:
 Յերբ վոր յեկավ, հասավ մարտը,
 ցորեն արինք մենք են արտը.
 մտանք հունիս, ընկավ քաղը,
 յես վեր առա սուր մանգաղը,
 մտա արտը ու քաղեցի,
 բայց դեմ ընկա մի մեծ քարի —
 քարի վրա փորված գրի.
 «Այ ցորնատեր, վայ քո բանին,
 բաղարչը տուր ջաղացականին»:
 Ցորնատերը դեմքը կախած՝
 այլուրն առավ, գնաց քաղցած:

25. Կարմիրն ու գայլը

Մեկ օր Կարմիրն ու իր քուռակը յետ մնացին ջոկից:
 Զիւրը տուն գնացին: Արեւ սարի յետեն անցավ, գիշերը
 վրա հասավ: Կարմիրն ու քուռակը կամոց-կամաց հեռա-
 նալով, անտառ հասան:


Անտառում շրջում եր մի քաղցած գայլ. վաղուց եր՝
 փորս չեր ճարել. փորը սովից վեց-վեց եր անում: Հան-
 կարծ նրա ականջին քուռակի բարակ խրխինջ հասավ:
 Գայլը կանգ առավ, սրեց ականջները, դունչը անկեց, ողջ
 հոտոտեց ու վազեց դեպի այն կողմը, վորտեղ Կարմիրն
 ու իր քուռակն ելին գտնվում: Զգուշությամբ — գոլեգոլ

մոտենում եր գայլը: Ելի մի քայլ — և բերանը քուռակի
 գավակին պիտի հասներ:

Կարմիրն զգաց վտանգը, խլչեց ականջները, հոտոտեց
 ողջ և զիլ խրխինջ արձակեց: Քուռակը լսեց մօր ձայնը,
 զգաց, վոր վտանգ ե սպառնում: Կարմիրը կանգնեց, բունջն
 աւղղեց դեպի քուռակը, յետեւ գայլին աբեց ու յետեւի
 վտանքի սմբակները պատրաստ պահեց:

Գայլը փորձեց մյուս կողմից մոտենալ քուռակին:
 Կարմիրը գավակն այն կողմը դարձրեց: Գայլը յերրորդ
 կողմից մոտեցավ — այստեղ ել Կարմրի պատրաստի սմբակ-
 ներին հանգիպեց:

Գայլի բերանի ջուրը գնում եր, համբերությունը՝
 հատնում:



Քիչ ել վոր անցավ, ուղղակի հարձակման դիմեց:
 Կարմիրն ել հենց դրան եր սպասում:

Յետեւի գուլգ վտանքով այնպես հասցրեց գայլին, վոր
 գայլը թռավ յերեք քայլ հեռու: Ընկավ գունչը ջախջախ-
 ված, իսկ յերբ վտաի յիւրով, գլուխն առավ ու կորավ:

Կարմիրն ու իր քուռակը մինչև լույս անտառում
 մնացին:

Առավոտյան նրանց գտան անտառում, և Կարմիրն ու
 իր քուռակը վողջ ու անվտանգ տուն դարձան:

26. Թեաւորը

Մեկ անգամ Թեաւորին և ուրիշ յերկու աղափնիներին տեղափոխեցին մի մեծ նավի վրա: Վորոշվեց նրանց ազատ թողնել այն ժամանակ, յերբ ավն աչքից չքանաս:

Տաս ժամվա ճանապարհորդութիւնից հետո նավի վրա մի սարսափելի դժբախտութիւն տեղի ունեցավ՝ շոգեմեքենան փչացավ: Թանձր մառախուղի մեջ նավը տատանվում եր մի թեթև տաշեղի նման: Նա միայն սուլում եր գուր տեղը և ոգնութիւն խնդրում:

Այս խորտակվող նավի վրա մեկը հանկարծ հիշեց պոստային աղափնիներին: Նրանցից ընտրեցին մեկին, պոչի ներսի կողմից կապեցին չթրջվող կտորի մեջ կապած մի հեռագիր: Յերբ ամեն ինչ պատրաստ եր, թռչունին բաց թողին, և նա մի վայրկյանում կորավ մառախուղի մեջ:

Կես ժամից հետո բաց թողին յերկրորդ աղափնուն: Սա թռավ, բայց մի քանի վայրկյանից հետո վերադարձավ ու նստեց նավի կայմի վրա: Նա վախեցել եր, և վոչ մի բան այլևս չեր կարող նրան ստիպել, վոր նորից թռչի այնպիսի ծովի վրայով:

Ապա տախտակամածի վրա դուրս բերին յերրորդ աղափնուն — Թեաւորին: Թեաւորի սիրտը մյուս յերկուսից ավելի համարձակ եր բարախում:

Թեաւորի պոչի տակ կապած հեռագրի բովանդակութիւնն այս եր.

«Առաւոտյան ժամը 12-ին, հինգշաբթի Ափից 200 կիլոմետր հեռավորութեան վրա մեր նավի մեքենան կտորրկեց: Մառախուղի մեջ միանգամայն անձար ենք մնացել: Վերջան հնարավոր է՝ շուտ ոգնութիւն հասցրեք: Նախապես»:

Թուղթը, վորի վրա գրեցին նավային ընկերութեան

հասցեն, զլանում և փաթաթեցին, չթրջվող պատյանի մեջ դրին և կապեցին Թեաւորի պոչի մեջտեղը: Ապա նրան ազատ թողին:

Իրեն սղի մեջ գզալով Թեաւորը նավի վրա մի շրջան գծեց, ապա յերկրորդն ավելի բարձր և աշտիւսի շրջաններով սավառնեց վեր ու վեր, միշտ վոր բոլորովին կտրւում ամպերի մեջ:

Առաջնորդվելով հոտառութեամբ՝ Թեաւորը միշտ մի ուղղութիւն եր բռնել, և արդեն նավից բաց թողնելուց մի քաջ հեռու, նա ուղիղ դեպի աղափնատուն եր թռչում:

Այդ որն աղափնատան տերն գաղղված եր, յերբ լսեց արագ թափահարող թևերի ձայնը: Նա յետ դարձավ ու տեսավ, թե ինչպես մի կապույտ աղափնի նետի պես լուսամուտից ներս թռավ և լսկույն ջրի վրա վաղեց: Տերը նայեց մի վայրկյան, տեսավ թե ինչպես աղափնին արագութեամբ ջուր է իմում, և հանկարծ բացակեցեց:

— Սա չէ՞ վոր իմ սիրունիկ Թեաւորն է:

Իր սովորութեան համաձայն գրպանից հանեց ժամացույցը և տեսավ ցերեկվա 2 ժամ 30 րոպեն է: Հետո նորից Թեաւորին նայելով՝ նկատեց նրա պոչին կապած ժապավենը: Սրադ փակեց դուռն ու լուսամուտները և Թեաւորին բռնեց. մի քաջից հետո հեռագիրը նրա ձեռքին եր:

Հասցեն կարդալով նա իսկույն վաղեց դեպի նավային ընկերութիւն: Այնտեղ իմացավ, վոր մոտ 200 կիլոմետր Թեաւորը թռել է 2 ժամ 40 րոպեյում՝ ավիանուսի թանձր մառախուղի միջով: Մի ժամից հետո խորտակվող նավին անհրաժեշտ ոգնութիւն ուղարկվեց:

Սովորութեան համաձայն, այս ընկերութեան քարտուղարն իր սեփական ձեռքով, անջնջելի թանաքով Թեաւորի

աջ թեկի փետուրի վրա դրեց նրա քաջուղործության ման-
րամասն դեպքը:

Մովից ուղարկված յերկրորդ աղափնին անհետ էր ընկած:
Յերևի նա զոհ գնաց կատաղի ովկիանոսին:

27. Մաքուր ոգում

— Փափուկ, սպիտակ	վաղուց ե, վոր
ձյուն ե յեկեկ,	մենք չենք աեսել
ծածկել փողոց	այսպես սիրուն
ու ծառեր,	յեղանակ:
յեկեք, յեկեք,	Խաղ անելով
ջան, մանուկներ,	մաքուր ոգում,
խաղանք ձմռան	ուժ, յեռանդ ենք
մեր խաղեր:	հավաքում,
Ողբ մաքուր,	Խորհուրդների
սառն ու պայծառ,	յերկի համար
յեկեք սղդանք,	աշխատանքի
սլաղի տանք,	պատրաստվում:

28. Նապաստակները

Մնառակ նապաստակները գիշերը կերակրվում են ծա-
ռերի կեղեկով դաշտային նապաստակները՝ աշնանացանով
և խոտով, կալի նապաստակները՝ կալերում դռնված հա-
ցահատիկներով: Գիշերը նապաստակները ձյան վրա թող-
նում են խորը, նկատելի հետք: Նապաստակներին վորսում
են թե մարդիկ, թե շները, թե գայլերն ու աղվեսները, թե
ողորմվներն ու արծիվները: Յեթե նապաստակն ուղիղ ճա-

նապարհով գնար, առավոտը նրան հետքերով իսկույն կգլու-
նեյին: Սակայն նապաստակը վախկոտ ե, և վախկոտու-
թյունն աղատում ե նրան:

Գիշերը նապաստակը դաշտերում ու անառններում
շրջում ե առանց յերկյուղի և ուղիղ հետքեր ե թողնում:
Բայց հենց վոր առավոտը լուսացավ, նրա թշնամիները
գարթնում են. նապաստակն սկսում ե լսել մերթ շնորթ
հաջոցը, մերթ սահնակների ճռուցը, մերթ գյուղացիների
կամ գայլի ձայները և յերկյուղից սկսում ե այս ու այն
կողմ ընկնել: Վաղում ե առաջ, վախենում ե վորեն բա-
նից, և յետ ե վազում իր հետքերով: Ելի մի վորեն ձայն
ե լսում և ամբողջ ուժով ցատկում ե մի արիշ կողմ,
հեռանում նախկին հետքից: Ելի մի վորեն թրխկոց, ելի
նապաստակը յետ ե դառնում և արիշ կողմ վազում: Յերբ
լուսանում ե, նա պառկում ե:

Առավոտը վորսորդներն սկսում են պարզել նապաս-
տակի հետքերը, շփոթության մեջ են ընկնում նրա կրքի-
նակի հետքերից և ցատկաւաններից ու դարմանում նապաս-
տակի խորամանկության վրա: Իսկ նապաստակը չի ել
մտածել խորամանկություն անել: Նա միայն վախենում ե
ամեն ինչից:

29. Ինչպես սովորեցի ձի հեծնել

1

Արդեն մի շաբաթ եր, վոր քաղաքից գյուղ եյի յեկել,
քեռուս մոտ:

Մի որ քեռուս դարձավ իր յերեխաներին, թե՛ «Յեկեք
ձեզ ձի հեծնել սովորեցնեմ. մեծացել եք, լավ ժամանակն ե»:

— Գեռի, բա յէս. — գիմեցի նրան:

— Դհու չե, Արամ, դու դեռ փոքր ես, կընկնես:
Յես հուզվեցի, քիչ եր մնում՝ լաց լինեյի:

— Լավ, — ասաց քեռիս, — բայց տես, քաղաքացի, լաց
չլինես հա, յեթե ընկնես Մարդ փոր ձիուց չընկնի, ձի
հեծնել չի սովորի:

Քիչ հետո արդեն Ջալալը բակումն եր:

Պինդ կացեք, տղերք, — ձայն եր տալիս քեռիս ու ձիու
սանձից բռնած՝ տղաներին ման ածում:

Հերթն ինձ հասավ. քեռիս մոտեցավ:

— Արամ, հիմա դու նստիր, տեսնես:

Թե ուրախացա և թե վախեցա, բայց աշխատում եյի,
փոր չնկատվի: Շատ աշխատեցի փոքր ասպանդակի՛ն դնել՝
չկարողացա. փոքրս չեր հասնում: Քեռիս գրկեց ինձ և
նստեցրեց:

— Պահ, քո սունը շինվի, այնքան թեթև ես՝ կարծես
փետուր լինես: — Հը՞ չես վախենում, հարցրեց նա:

Շատ եյի վախենում, բայց փոր մորթեյին, չեյի ասի:
Ջալալի ցից ականջները տեսնելիս, թվում եր, թե ինձ
վրա յե բարկացեր:

— Դեհ, չընկնես, — ասաց քեռիս ու ձին բաց թողեց:

2

Ջալալն սկզբում դանդաղ եր գնում: Թամբը կոկիկ
եր, վախենում եյի՝ շուռ գամ:

— Հը՞, պինդ ես նստել, — ձայն տվեց քեռիս:

— Հա, պինդ եմ նստել:

— Ուրեմն յորդա, — և քեռիս չկկացրեց բերանով:

Ջալալն արագացրեց քայլերն ու սկսեց ինձ վեր-վեր
թուցնել: Յես աշխատում եյի չծովել: Քեռիս գովեց.

— Սպրեհ, դռչա՛դ, ապրես:

Հենց այդ ժամանակ մի դյուղացի մոտեցավ ու սկսեց
խոսել քեռու հետ: Քեռիս ել չեր նայում ինձ:

Հանկարծ նկատեցի, փոր թամբը ծովել ե. ուզեցի
ուղղվել — չեղավ: Ուզեցի բղավել քեռու — ամաչեցի: Ջա-
լալը մի գլուխ յորդա յեր վազում, և յես ալիլի ծովեցի:
Աչքս գցեցի քեռու. նա տաք-տաք խոսում եր դյուղացու
հետ և, առանց ինձ նայելու, ձայն եր տալիս: «Սպրեհ»,
դռչա՛դ, ապրես:

— Յես կորահ, — մտածում եյի, բայց ամոթ ինձ՝ թե
ձայն հանեյի:

Ջալալը մեկ ել ցնցեց, և յես ցած ընկա:

Ձին կանգ առավ. քեռիս նկատեց.

— Ա՛յ քեզ բան, Արամս դրոպել ե ձիուց:

Նա մոտեցավ ինձ ու ծիծաղելով հարցրեց.

— Հը՞, վա՛ց ե քեֆդ, մեր աղա:

Ըես պատասխանեցի, փոր անջառ եմ:

Ծիշտն ասած՝ լացս գալիս եր, բայց ինձ դսպում եյի:

Մեկ ել նստեցի, ու ես անգամ ել չեյի ընկնում:

Սյապեռ մի յերկու անգամ, և յես շատ շուտով սո-
վորեցի ձի նստել:

30. Գործարանում

Իրար անցան ճախարակներ,
ժիր փոկերն ու պոռուտակներ,
շողեմուրճը հպարտ թնդաց
ու վորոտաց՝ դեռ չեմ հոգներ,
դեռ չեմ հոգներ:

Նրան խմբով ձայնակեցեին
չարածձի հագար մուրճեր,

ծրվելով զըրնգացին,
կկացին՝ վորպես ուրախ
դեղձանիկներ:

31. Առյուծն ու շնիկը

Լոնդոնում ցույց ելին տալիս վայրենի գազաններ և տեսնելու համար վերցնում ելին փող, կամ շներ ու կատուներ ելին վերցնում այդ գազաններին կերակրելու:

Մի մարդ ցանկացավ տեսնել գազաններին: Փողոցում նա բռնեց մի շնիկ ու բերեց գազանանոց: Նրան թողին, վոր դիտի գազաններին, իսկ շնիկին զցեցին առյուծի վանդակը, վոր առյուծն ուտի:

Շնիկը սուշը քաշեց և կուշ յեկավ վանդակի մի անկյունում: Առյուծը մոտեցավ ու հոտոտեց նրան:

Շնիկը պառկեց մեջքի վրա, բարձրացրեց թաթիկներն ու սկսեց պոչը շարժել:

Առյուծն իր թաթով շուռ տվեց նրան:

Շնիկը վեր թռավ և առյուծի առջև կանգնեց յետևի թաթիկների վրա:

Առյուծը նայում էր շնիկին, զլուխը դեպ-դեպ եր գարձնում ու չէր դիպչում նրան:

Յերբ տերը միս տվեց առյուծին, առյուծը մի մասը կերավ, մի մասն ել թողեց շնիկին: Յերեկոյան, յերբ առյուծը պառկեց քնելու, շնիկն ել պառկեց նրա կողքին և իր գլխիկը դրեց նրա թաթին:

Այդ ժամանակվանից շնիկն ապրում էր վանդակում՝ առյուծի հետ: Առյուծը նրան չէր վրասում, նրա հետ եր ուտում, քնում, յերբեմն ել՝ խաղում:

Մի անգամ շնիկի տերը յեկավ գազանանոց և ճանա-

չեց նրան: Առաջ վոր՝ շուհն իրենն է Գազանանոցի տերն ուզում եր վերադարձնել, բայց հենց վոր սկսեցին շանը դուրս կանչել, առյուծը բարկացավ ու մոնչաց:

Մի տարուց հետո շնիկը հիվանդացավ ու սատկեց: Առյուծն աչլեա չէր ուտում, հոտոտում, լիզում եր շանն ու թաթով փաղաքշում:

Յերբ նա հասկացավ, վոր շնիկը սատկել է, հանկարծ թռչկոտաց, բարկացավ, սկսեց պոչով խփել ինքն իրեն, հարձակվել վանդակի պատերի վրա, կրծել փականքն ու հատակը:

Ամբողջ որը նա ծեծկվում եր, վանդակի մեջ դեպ-դեպ անում ու մոնչում, հետո պառկեց շան կողքին ու լռեց: Տերն ուզում եր դուրս բերել սատկած շնիկին, բայց առյուծը վոչ վոքի նրան մոտիկ չէր թողնում:

Տերը կարծում եր, թե առյուծը կմոռանա իր վիշաը, յեթե նրան ուրիշ շուն տա, և նա վանդակը նետեց մի կենդանի շուն, բայց առյուծն իսկույն պատառուեց նրան: Հետո նա իր թաթերով զրկեց մեռած շնիկին և այդպես պառկեց հինգ օր:

Վեցերորդ օրն առյուծը սատկեց:

32. Կատվի ձագը

Յեղել են մի յեղբայր ու մի քույր,— Վառյան և Կատյան. նրանք մի կատու ունեյին: Գարնանը կատուն կորավ: Մանուկները նրան փնտրեցին ամեն տեղ ու չգտան: Մի անգամ նրանք խաղում ելին շտեմարանի մոտ և լսեցին, թե ինչպես նրանց գլխավերևում ինչ-վոր թռչլ ձայներ են լսվում— «միառ, միառ»: Վառյան սանդուխդով բարձրացավ շտեմարանի տանիքը: Կատյան ներքևում կանգ-

նած, շարունակ հաջցնում եր. Վրաստ, դամբար: Վասյան
չեր պատասխանում: Վերջապես նա կանչեց. «Դատ, մեր
կատուն ե... Նա ձագեր ունի, թե՛ հրաշայի՛ր յին, շուտ,
այստեղ յեկո:

Կատյան վազեց տուն, կաթ վերցրեց և բերեց կատվին:

Ձագերը հինգ ելին: Յերը նրանք մի քիչ մեծացան,
սկսեցին դուրս գալ այն անկյունից, վորտեղ ծնվել էին.
յերեխաներն իրենց համար ընտրեցին նրանցից մեկին, վորը
գորշ էր, սպիտակ թաթիկներով, — և տուն տարան: Մայ-
րին այդ կատվի ձագին թոզեց յերեխաների համար, իսկ
ննացածներին բաժանեց հարևաններին: Յերեխաները կե-
րակրում ելին կատվի ձագին, խաղում ու քնում նրա հետ:

Մի անգամ յերեխաները գնացին ճանապարհի վրա
խաղալու և իրենց հետ վերցրին կատվի ձագին:

Դամին շարժում եր ճանապարհի վրա թափված ծղուտը,
կատվի ձագը խաղում եր ծղուտի հետ, յերեխաներն ուրա-
խանում ելին: Հետո նրանք ճանապարհի մոտ թրթնջուկ
գտան, գնացին հավաքելու և նրան մոռացան:

Հանկարծ նրանք լսեցին, վոր մեկը բարձրաձայն գո-
ռում ե. «Դեպի յետ, գեպի յետ», ու տեսան, վոր թռչում
ե ձիավոր փորսորդը, իսկ նրա առջևից՝ յերկու շուն, վո-
րոնք տեսան կատվի ձագին և ուզում ելին բռնել: Իսկ
այդ հիմար ձագը փոխանակ փախչելու, նստել եր, մեջքը
ծռել ու մտիկ եր տալիս շներին: Կատյան վախեցավ շնե-
րից, (այն) և փախավ նրանցից: Վասյան, ինչքան վոր ուժ
ունեւ, վազեց և շների հետ միասին մոտեցավ կատվի ձա-
գին: Շներն ուզում ելին «հափ» անել կատվի ձագին, բայց
Վասյան փորով ընկավ նրա վրա և պաշտպանեց:

Վորսորդը վրա հասավ և վնդեց շներին:

Վասյան կատվի ձագին տուն բերեց և ել չեր տանում
զաշտ:

33. Մանուկն ու ձյունը

— Ճերմակ փաթիլ,
սիրուն թիթեռ,
քեզ ո՞վ բերեց
յերկիրը մեր:

— Ասա ազա՛
ինչի՞ց ե, վոր
թափ ունես
առեղնավոր:

— Յես արցունքի
շիթ եմ ստած,
ցրտից սառել
ընկել եմ ցած:

— Ճամբեն դալիս՝
գրկեցին ինձ
բյուրեղիկներ
հաղարավոր:

Այն մոխրագույն
ամպը վոր կա,
իմ սիրասուն
մայրիկն ե նա:

— Ճերմակ փաթիլ,
սիրուն թիթեռ,
իջիր, իջիր,
յերկիրը մեր:

Ցուրտ ե այնտեղ
բուք ու բարան,
արեն այնտեղ
մուժում կորափ:

Իջիր անթիվ
բույրերիդ հետ,
զարունը դա
կղանաք յետ:

Ու հեկեկաց
մայրս հոնկարծ,
շատ արցունքներ
հողմահարած,
ու նրանց հետ,
ցրտից ստած՝
յես ել ընկա
յերկնքից ցած:

Իսկ հիմա ցուրտ
յերկնքի տակ,
դաշտում հյուսեք
ճերմակ վերմակ:
Տաքացրեք
ցորեն, գարի —
գաղնանն առատ
թող հաց լինի:

34. Զմուռն ճանապարհը

Զմեռը հանաք չի անում, բռնել է ամառի, ձյունոտ դաշտերը. նայում ես ու չես ջոկում անձայր դաշտերն սոխտով ամպերից:

Ու նայում ես — աջ, ձախ, վերև, ներքև — ամեն տեղ նույնն է՝ ձյուն, ձյուն, ձյուն:

Բուքը խաղում է դաշտերում, ձյունի սյուներ է սլափեցնում ու քշում ամպի քուլաների պես:

Դժվար է այսպիսի ժամանակ մենակ գնալը. ինչքան ես ուրախանում, յերբ հեռվից լսում ես սահնակների ճռուճոցն ու ձիերի վզից կախած դանդաղների ձայնը: Սիրտդ հանգստանում է, յերբ տեսնում ես սահնակների շարանը, վորոնց կողքից, տաք մուշտակներում փաթաթված՝ քայլում են տերերը:

Ձիերի դուռնն ու աչքերը պատած են յեղյամով:

Սահնակատերերը թափահարում են հաստ թևերը և մեղմ ձայնով սիրտ տալիս ձիերին, փաղաքշում նրանց.

— Դե, մատանդ, շարժվիր:

Ձեռ ուզում բաժանվել, հեռանալ սահնակների կողքից:

Իսկ ցուրտը սաստկանում է, բուքը ծածկել է ճանապարհը. գյուղացու բեխերից սառցի լուլաներ են կախվել. դժվար է բերան բանալ ու խոսել:

Գլուխդ կոխում ես տաք մուշտակի մեջ, կուշ գալիս սահնակի խորքում ու աչքի տակով նայում — չի՞ յերևում քաղաքը: Քեզ սիրտ է տալիս այն հույսը, թե քիչ էլ համբերիր, առն կհասնես ու կնստես տաք վառարանի մոտ, թշնամի ինքնայեռի կողքին...



35. Փոքրիկ գյուղացին

Մի անգամ, ձմռան ճրճաբան ցրտին անտառից յերթ — սառ-սառնամանիք. ահա՜ անտառից դեպի սարնիվեր դանդաղ գալիս է ձին՝ ցախը բարձած:

Ընկած առաջը ողամաբղու պես, քաշում է սանձը մի փոքրիկ տղա՝ մեծ կոշիկներով, մուշտակը բրդոտ, ձեռնոցները մեծ, ինքը՝ թիզ ու կես:

— Բարև, յեղբայրս:

«Քնն քո ճամպեն».

— Դու շատ խիստն ես, ինչպես տեսնում եմ. Վերանգից բարձած բերում ես ցախը:

«Ի հարկե՜ մերուց: Հայրս, լսում ես, կտրում է ախտեղ, յես ել կրում եմ»:

— Ե, ի՜նչ, շնոր մեծ ե ձեր ընտանիքը
«Այո, վոքը չի, բայց տգամարդիկ
միայն յերկուստ ենք՝ հայրիկս և յես»։

— Այ թե բանն ի՜նչ ե։ Անձնդ — «Պողոս»։

— Տարիդ քանի՞ս ե — «Յոթն անցել ե»։

— «Ի՛նչ, ջանա», — գոչեց փոքրիկը ձիուն,
թափ տվեց սանձն ու արագ քայլեց։

36. ԱՐՉԸ

Մի տարի, յերբ յես ջահել եյի, ձմեռը մոտեցել եր,
բայց մենք դեռ վառելիք չունեյինք։ Մերս շարունակ
ասում եր.

— Այ Սերոբ, ձմեռը յեկավ, ճար արա՛, ցրտից կկո-
տորվենք...

Հեշտ եր ասել «ճար արա»։ Մեքան փող չունեյի, վոր
փետի իրավունք առնեմ, կամ ուրիշների նման անտառա-
պահին մի բան տամ, մի սայլ փետ բերեմ։

Իսկ մերս ամեն ոք՝

— Սերոբ ջան, փետի ճար արա...

Շատ վոր ասավ, աշունքվա մի ցուրտ ոք, դեռ լուռը
չբացված, վեր կացա, կացինը գոտիկս խրեցի, գնացի ան-
տառ։ Եղպես մթանը գնացի, վոր անտառապահը չաեսնի.
ձորով մտա ծմակը, ենպես մի խոր տեղ, վոր կացնի ձեն
չսվի։ Թե չե՛, անտառապահ Վանոն մեկ ել տեսար՝ գլխա-
վերևը ցցվեց։

Եսպես ահը սրտիս գնացի մտա ծմակն ու հասա մի
ցցաչոր ծառի, վոր վաղուց աչքադրել եյի։ Առտջ դեռ մի
քանի չոր փետ, ցախ հավաքեցի, հետո ել կացինն առա ու

սկսեցի եղ ցցաչոր ծառը կտրել՝ Թը՛խկ-հա-թըր՛խկ, Թը՛խկ-
հա-թըր՛խկ...

Կտրում եմ, բայց վայ են կտրելուն — սիրտս ել հետը՛
Թը՛խկ-հա-թըր՛խկ... Մտածում եմ՝ ուր վոր ե հրեա Վանոն
կերեա ու վայ ինձ...

Շատ կարելի յե եղ ըռպեյին նա իր համար քնած եր
հանգիստ, բայց ահը սրտիցս չեր գնում։ Վոր բռնի — ի՜նչ
պիտի տամ, վոր ազատվեմ. կացինը ձեռիցս կառնի, տու-
գանքն ել վրեն կգա... Մորս կարպետն ել ծախեմ — չեմ
ազատվի... Կտրում եմ ու հետն ել մտածում.

«Վանոյի ականջը խուլ. անի, ինչ կլինի՛ Վանոն չսի»...
Ու ինձ ենպես ե թվում, թե իմ թխկոցից սար ու ձոր
դմբդմբում ե։

Ու հայ եմ անում — շուտ վերջանա, թխկոցի ձենը
կտրվի...

Կտրում եմ եսպես քափ ու քրտինք մտած։ Հանկարծ
եղ Թունդ ժամանակ մեկը սուտ ու փուտ փաթաթվում ե
մեջքիս ու յես քաշում ինձ։

Ինչպես տաք ջուր լցնեն գլխիս — տաքացա ու ավելի
քրտնեցի։ «Այ դրողը ասնի քեզ, Վանո, մտածեցի, ձեռդ
ընկա ելի»... Բայց ես վոնց յեկավ, վոր ձենը չլսեցի։ Մեկ
ել մտածում եմ՝ ինչո՞ւ յե եսպես մեջքս բռնել ու ձեն չի
հանում։ Եղ զարմանալի՛ յեր... Բայց մեկ ել աչքս ցած
դցեմ — ի՜նչ տեսնեմ... մեջքովս պատ տվածը մարդու ձեռ-
նեք չեն...

Արջի թաթեր...

Ես անգամ ջանա դող ընկավ։ Վա՛նց թե իմ մահն ել
արջով պիտի ըլեր, — մտածում եմ, ու ահից չեմ իմանում
ինչ անեմ. ժաժ գամ — ավելի վատ, ժաժ չգամ — մինչև
յերբ։ Անտերի շունչն ել արդեն ուսս տաքացնում եր։ Լսել

եյի, վոր արջը կենդանի մարդ չի ուտում: Թաղում — հո-
տեցնում ե' նոր: Ուրեմն, ասում եմ, դեռ հուշս կա: Մեկ
եւ մտածում — իսկույն չի ուտի, բայց յեթե հակառակեմ,
կարող ե կծոտեր, կարող ե շարդեր, ով ե իմանում ել ինչ...
Ու փետացել եմ կացինը ձեռքս...

Մեկ եւ կողքանց վոր յետ չնայեցի — տեսնեմ դա բե-
րանը բայց ինձ ե նայում: Թաղին բերանը վոր տեսա —
ափելի վախեցա: Շատ կարելի յե եղ բոլեցին բան ել չա-
նեք, բայց զարգանդ յեկալ վրաս: Ահաղին բերան, սուր
ատամներ... Ի՞նչ անեմ, մտածում եմ — սուտ մեռած ձեռ-
նամ... Մեկ եւ, վոնց վոր մեկն ասի, — ել ի՞նչ ես սպասում,
հունար ունեա՝ տես: Միտքս հանկարծ մի բան ընկալ-
կացնի կոթը կամաց տարա գեպի ուսս ու մեկանց դրի
բերանը... ասաջ դեռ կամաց, վախենալով, ինքն ել չիմա-
ցալ վոնց, հետո մի անգամից վոր հուզ չալի — անտերը
ղլղացրեց ու մեջքս թռեց... Յես ինձ գցեցի ցած. մեկ
եւ վոր յետ նայեցի, տեսնեմ դա յետի թաթերի վրա
կանգնել ե' դունչը վեր տնկած, կացինը բերանում... դա-
դադած նայում ե ինձ. ուզում ե վրա պրծնի, բայց չի
կարում կռանա, անաղին կացնի կոթը խրվել եր բողազը,
վիզը չեր կարում կռացնի. մենակ ես եր անում, վոր գլուխը
տարուբերում եր, վոր կացինը բերանից դուրս հաներ, բայց
տառ արջ ել դար, կացինը դուրս չեր գա...

Մի քանի բոլե նա ինձ եր նայում, յետ՝ նրան: Հետո
անտերը փորձեց գոռալ ու դալ ինձ գալ. յետ վախից
ծառի յետն անցա: Բայց եղ ել գուր եր, արջը մի յերկու
վոտ փոխեց յետեի վոտներով ու ելի կանգնեց, գլուխը
թափահարեց: Ինչպես յերևում ե' կացինը շատ եր նեղում...
Եղ վոր տեսա, սրտապնդեցի: Մի փետ վեր կալա ու —
ան հա քեզ — ասի դրա գլխին... Անտերը ելի, կացինը բե-

րանին, դունչը վեր տնկած, յեկալ դալ ինձ: Բայց նորից
ղլղացրեց ու կանգնեց, գլուխը թափահարեց:

Մին եւ վոր փետ վերցրի խփեմ, դա իրեն գցեց ցած,
գլորվեց կացինը բերանին: Գլորվեց մի ընչ տեղ ու նորից
կանգնեց, թաթով կացինը բռնեց: Շարժում ե մին գետ,
մին՝ դեռ Զեղավ. դուրս չեկալ. շատ եր պինդ ու խոր:

Յես հետա, ծառի յետն կանգնած մտիկ եմ տնում ու
ինքս ինձ ծիծաղում:

— Այ քեզ, — ասում եմ, — ուզում եյիր ինձ ուտել:
հիմի կեր...

Մեկ եւ մտածեցի, թե ես լավ յետ ազատվեցի, բա
կացինս. ինչո՞վ պիտի փետ կարեմ:

Ել առանց յերկար մտածելու վազեցի տուն, տանից
հրացանս տարա ու դրան տեղն ու տեղը...

Մորթին բերի տուն:

Իսկ կացինը... հանեցի մեծ չարչարանքով. բերան կո-
խելն այնքան դժվար չեր, ինչքան հանելը:

Յերբ հանեցի — կոթը մի թիզ տեղ աղնոտ եր:

Մորթին ծախեցի քսան մանեթով, ասի անտուռապա-
հին — Վանոյին ու մի յերկու սել փետ բերի ձմեռվա
համար:

37. Աղվեսը

Աղվեսն եկալ բարձր սարից,
հարցմունք արավ լիքը թառից.
«Մեծ խորոզ ե հարկավոր ինձ»:
Քաղցած աղվեսն, ագին ծաղիկ:

Աղվեսն հաղել քուրքը դեղին,
սլառույտ կտա շուրջը դեղին,
շուր կարվեց տատիս լեղին:
Դեղին աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն ասավ պառավ տատին.
«Մտիկ չեմ տա ձեռիդ փեռին,
կարոտել եմ թըմբլիկ ճուռին»:
Անվախ աղվեսն, ազին ծաղիկ:

Աղվեսն եկել նստել դեզին,
յերկար ազին ծռել վզին,
աչք ե գցել մեր խորոզին
են գող աղվեսն ազին ծաղիկ:

Մին ել կանչեց տատս ճլառավ.
«Սման, հասե՛ք, տարնա՛վ, կերնա՛վ,
գլխիս ես ի՞նչ փորձանք բերավ
անտեր աղվեսն, ազին ծաղիկ:

Ա՛յ իմ խորոզ, կարմիր խորոզ,
ման կգայիր գոռոզ-գոռոզ,
փետուրդ արավ փողջ դար ու փոս,
են չար աղվեսն, ազին ծաղիկ»:

Աղվես, աղվես, փոքրիկ դադան,
վռաներդ կարճ ու խիտ փաղան.
Հներն ամեն քեզ չհասան,
ճարպիկ աղվես, ազին ծաղիկ:

38. Մանչուկն ու Կուտիկը

1

Ցուրաը քանի գնաց, սաստկացավ. ճոճուան սառնու-
մանիք ե անում. թքում ես՝ գետին չի ընկնում. քամին
վզգալով դռներ ե ջարդոտում, տեղ-տեղ փոթորիկը ձյունի
սարեր ե դիզել. տանից դուրս գալը վտանգավոր ե դարձել:
Ուսումնարանում մնացել են մոտէկ ապրող սակավա-
թիվ մանուկներ. հեռու կենդանիքը չեն գալիս:

Վարժուհին Մանչուկին լավ եր պահում. ել ինչի՞
Մանչուկը պիտի վախենար ցրտից — յերբ սաստիկ բուք
կամ ցուրտ եր լինում, գիշերները տուն չեր գնում:

2

Յերբեմն թեյի ե ճաշի ժամանակ վարժուհին կատակ-
ներ եր անում Մանչուկի հետ: Իսկ Մանչուկը նստում եր
նրա դիմաց ե լեզուն կախ գցած՝ քարտախտակի վրա
տառեր եր գրում: Կուտիկն ել այստեղ եր. պառկում եր
ու խումփացնում, մոմում, կողկանձում...

Մանչուկի խելքն ու միտքն իր դասերի հետ եր: Մեկ
ել տեսես՝ սկսում եր ժպտալով գծածներին նայել: Ի՞նչ
սիրուն են, ի՞նչ լավ են գրված. մնան ինչ, թե Ա-ի ատամ-
ները մի քիչ վարազի ժանիքի նման ծուռ են. շատ հար-
կավոր ե, թե Ն տառը շան նման պազել ե. նա սկսում ե
իր դասերի հետ բարձր ձայնով խոսել, մեկ-մեկ ուղղել:

— Կաց, կաց, դու եղ ինչի՞ յես դունչդ ցցել ու բե-
րանդ բաց արել, ամոթ չի, հիմի յես քո ռեխր կփակեմ...
Հը՞, կերճը, լավ եր... Իսկ սա ինչի՞ յե պոչը կոացրել իմ
Կուտիկի պոչի պես. այ դու խորամանկ, հիմի յես քո
գլխին կտամ:

Նա սաստռում եր անհնազանդ տառին ու դառնում վարժուհուն.

— Վճնց ե, վարժուհի ջան, լավ ե...

— Լավ ե,— պատասխանում եր վարժուհին ու նորից գրքի մեջ թաղվում, իսկ Մանչուկը դարձյալ իր գրիչն եր ձռնազնում...

39. Գիշերն անտառում

Նն, ինչ վոր պիտի պատմեմ, հենց իմ գլխովն անցած մի դեպք ե:

Ճիշտ ե՝ արդեն յերեսուն տարի յե անցել եդ որից, բայց մինչև հիմա ել հիշելիս՝ մազերս փշաքաղվում են:

Դե, պատմեմ, լսեցեք.

Չորս սայրորդ էյինք. ապրանք էյինք տարել քաղաք՝ վերադառնում էյին. Հունվար ամիսն եր: Մեծ անտառում միջնեց, պետք ե գիշերելինք բացատում:

Յեզներն արձակեցինք, խոտ ու դարման տվինք:

Սաշա յերկուսով սկսեցինք չոր ճյուղեր կտրատել ու փայտ հավաքել, մյուս յերկուսը սայրերի կողքին՝ ձյունը մաքրեցին: Ճերկու տեղ մեծ կրակ վառեցինք, մեկը յեզների այս կողմը, մյուսը՝ այն կողմը, վոր նրանք ել չմրսեն:

Հանեցինք մեր պաշարը, լավ կերանք, մոտիկ աղբյուրից ել կաշա ջուր խմեցինք (անտառում ձմեռն աղբյուրները չեն սառչում), կրակին փայտ ավելացրինք և մեր յալինջիկներում փաթաթված՝ կրակի առաջ պառկեցինք:

Շատ ժամանակ եր անցել, թե քիչ, չգիտեմ, մեկ ել Գրիգոր քեռին գտաց.

— Վեր կացեք, այ անաքանդներ, գելանն եկան. գլխներիդ ճարը տեսեք:

Վայ, ինչ տեսարան եր... հեռվից լավում եր գայիքի վոռնոցը. մեկը վոր սկսում եր, մյուսները շարունակում էյին. նրանց աչքերն ենալես էյին պաղում, վոր կարծես յերկնքի աստղերն իջել էյին յերկրի վրա: Յեզները թափել էյին իրենց խոտը և մեջքերն իրար արած, գլուխները կախած, անհանգիստ դիտում էյին հեռուն ու վնչաջնում:

Յես շատ վախեցա. վեր թռա, յափնջիս գցեցի ու չգիտեյի՝ ինչ աներ:

— Կրակը, կրակը թեժացրեք,— կանչեց Գրիգոր քեռին, առանց իրեն կորցնելու:

Փայտ լեցինք, կայծերը յերկնք բարձրացան Գայլերը շրջապատել էյին մեզ. կրակի լույսի տակ յերևում էյին նրանց անուլի բերանները. լսում էյինք նրանց ատամների չխկչխկոցը...

— Վայ, Գրիգոր ջան, կորած ենք,— ասում եր վախկոտ Մեղրն աղերը:


— Իսկի մի վախենաք, վոչինչ չի լինի. մոխ հոտ են առել անիրազները... այ մի հրացան լինել, հա... տեսում եր քեռին հանգիստ ու անխոհ:

Թե ինչքան տեսեց ես սարսափը, չեմ կարող ասել: Լույսը հեռու յեր, իսկ գայլերի ողակը հետզհետե նեղանում եր... ու ենքան ել շատ էյին... յես յերեսուն ասեմ, դու քառասուն իմացիր.

Յերբ գայլերն ենքան էյին մոտեցել, վոր կարելի յեր փայտը շարաւելով հասցնել նրանց, քեռին հրամայեց, վոր բոլոր միասին վառվող ածխակաթները շարաւեք գայլերի վրա:

«Դե շուտ» վոր ասեց, բոլորս ել վառվող փայտերը շարաւեցինք գայլերի վրա: Նրանց մեջ իրարանցում սկսվեց ու յեռ-յեռ գնացին: Եդ միջոցին քեռին վերցրեց մի ահագին վառվող ձող և ուղղակի հարձակվեց ամենամոտ գայլի

վրա. Սա սոսկալի վոռնոցով սկսեց փաշխեր, մյուսներն
խսկաշն հետևեցին նրան: Դու մի առիւ — քեռին գիտեցել
ե, թե ես մեկը վոհմակի առաջնորդն ե, ու հենց նրան
պետք ե փախցնել:



Հինգ բուսեյից հետո գայլերի վոռնոցը կտրվեց:

— Ել չեն գա, անհանգիստ մի լինիք, — ասաց քեռին. —
տեսեք, յեզներն ինչպես ուղղվեցին ու սկսեցին խառ ուտել
Սպասեցինք... գայլերը չվերադարձան:

— Շատ յետ յեկածն ես հա, Գրիգոր, — ասաց Մել-
քոն ապերը:

Իսկ Գրիգոր քեռին փաթաթվել եր յափնջու մեջ և
արդեն հանգիստ խոստում եր:

40. Վոչ մի գայլ մեր հանդերուս

1

Վոչխարների կատարածից հետո Տիկոյի խաղեյինը կա-
տաղել եր. մենք բոլորս մի մարդու պես կանգնեցինք մեք
ընկերով թիկունքում ու պաշտպանեցինք:

— Ել են հին ժամանակը չի, խելքդ գլուխդ հավաքիր,
ինչ ա՛ փորձանքը հա Տիկոն չի բերել:

Տիկոյի խաղեյինը մի լավ հայոյեց ու սպանված վոչ-
խարները սելը լցրեց, տարավ:

Վրեժն ու կատաղությունը լափում, բորբոքում եր մեզ
Վորոշեցինք՝ ինչ ել վոր լինի, են յերկու գայլերին ել
սպանել:

— «Վոչ մի գայլ մեր հանդերուս» — անա մեր պիտ-
աներական — վորսորդական լողանալը, ու վորոշեցինք գայ-
լերի դեմ գործի դնել նաև թակարդն ու դեղը:

Մյուս ուրը բերինք թակարդն ու մի քիչ ել թույն:
Թույնը շաղ ավինք մի քարափի ծաղի առաջ, կարծելով,
վոր գայլի բուն ե, իսկ թակարդը դրինք յերկու քարափի
մեջ, վորտեղից ամեն գիշեր գայլերը գալիս ելին գոմերը,
ձայն-ձայնի տալիս ու վոռնում:

2

Յերկու որ անցավ: Դեռ փոշին չկա: Թակարդի միջի
մսի կտորը սառել, քարացել եր ցրտից:

Մեր բախտից գայլերը նորից անհետացել եյին:

Մի առաւոտ, յերբ «գայլի բնին» մոտեցանք, տեսնեմ՝
կադնի ծառի յետևից մի պոչ ե յերևում:

— Տղերք, գելը դեղ ա կերել, սատկել, — գոչեցի յետ
ու վաղեցի առաջ: Մի անգին թավամազ պոչ բռնեցի,
քաշեցի — տեսնեմ՝ աղվես ե:

— Տո, խնամի աղվես, բարով-բարով, հը... Մեքոն
ապու մին ու ճար հավը վոնց անուշ արիւ: Խեղճ, ով
գիտի — դեռ չի ել մարսել:

— Խեղճին կիսամուրազ արինք. ես վիրունի (վայ-

րենի) տնդում հազիվ եր մի հալ ճարեր, են ել գլխին
խում պրինք...

Աղվեսին քաղ տվինք գոմերը, մոլթին տիկ հանեցինք
ու կախ տվինք գայլի, նապաստակների ու կխտաբի մոր-
թիները մոտ:

3

Ձյունը ծնկներին է հասնում. չոր ճակը փչրվում է
փռաներին տակ: Մոտենում ենք թափարդին. ահա քաղը
սակայն թափարդը չկա, հանված է, ու հեռքեր կան, կար-
ծես քաղ են տվել, տարել: Մեկ ել քարի տակից ինչ վոր
շան նվոց եմ լսում—մի ահաղին պոչ եր շարժվում: Իջա
ներքե, տեսնեմ՝ մի ահաղին բաց բերան և մի գույգ կա-
տալի աչքեր: Իսկ և իսկ գայլ: Ուրախության ճիչեր ար-
ձակեցի ու հարձակվեցի գայլի վրա: Գայլը կանգ տալի
լիզեց փրափոր թափն ու ցատկեց իմ կողմը. բայց իզուր.
թափարդը պինդ եր:

«Յա տեսերը մի ոյին չհանի գլխիս»,—մտածեցի ու
մոգլեցելով կաշի ծառը՝ դռացի.

— Հեյ, Տիկ... Վահան, հեյ...

Ինչ անց, ձորում լավեց շների հաջքը, նրանց հետ
եղ՝ աղերքի աղմուկը: Շները հասան ու ահաղին աղմու-
կով հարձակվեցին գայլի վրա:

— Տղերք, սպասեցեք, պետք է փողջ-փողջ բռնենք,
գյուղ տանենք: Դուք յետ քաղվեցեք,—ասաց Տիկոն:

Թեկը թռավ ողում և մի ակնթարթում ողակը գրկեց
գայլի վիզն ու սկսեց սեղմել: Գայլն սկսեց քաղըչել պա-
րանը, առանձնորով ծվատել, բայց զուր... Ձորս հողով կախ
ընկանք պարանից ու կիսաշունչ գայլին ձյունի վրայով
քաղ տվինք դեպի գոմերը...

Ձի սիրում եք, յերեսներ... Հա... Դե վոր եղպես և՛
պատմեմ ձեզ Արարի մասին: Ձի, ինչ ձի... եղպես ձի
յես մի անգամ եմ տեսել.

Թիֆլիսում եր: Ծառայում եյի Փիրագովի տանը:
Հասարակ ծառայող չկարծեք հա—կառապան եյի: Կառքը
լծում եյի ու աղիս ֆուսայով պտտում քաղաքում: Շատ
ձիասեր մարդ եր: Հավանածը ձեռից չեր թողնի: Ինչ ել
ուղեյին՝ կտար-կառներ: Մեկը ծախում եր, մյուսն առ-
նում: Ուզում եր, վոր քաղաքի ամենալավ ձիանքը իրանը
լինեն, վոր պարծենա, թե տեսեք, այ, ինչ ձիեր ունեմ:

Ուրախությանը չափ չեր լինում, յերբ գտվում եյին:
Աղջկան, աղին գովեյին, ենքան չեր ուրախանա, ինչքան՝
ձիերին:

Մի խոսքով ուշ ու միտքը ձիերն եյին:

Մի որ դա մի ձի առավ—բերեց, թե՛

— Սերսը, լծի, թող սովորի, մինչև յեկող կիրակի
դրանով պիտի ման գամ...

«Պաի ման գամ»... Ինչ կարող եյի անել, խոսքը
հրաման եր: Մի չորս-հինգ որ՝ առավառ-իրիկուն դրան
լծեցի, սովորեցրի քիչ: Չար չեր, լծվում եր, բայց չեր
ուշում գնալ. ձգվում եր կանգնում, կամ գնալիս առաջի
փոտները բարձրացնում եր՝ յետ-յետ գնում: Մեկ, յերկու՝
դրան մի լավ գաղեցի... Գնաց... Մնա՛ք վոր կիրակի՝ որը
Փիրագովիս առդը-փառք տարա ման ամեցի:

Մնքան հավանեց, վոր ամեն որ Արարին լծել եր տա
լի—ման գալիս: Սիրում եր խամ ձի սովորեցնելը: Մեկ-

մեկ ել ինձ նստեցնում եր իր տեղը, ինքը քշում է նդ՝ արդեն քաղքեց դուրս յեկած ժամանակ:

Նսպես անցավ մի քանի ուր, մի ուր ել աղես յեկավ թե՛
— Սերոբ, Արաբը լծի...

Գնացի գոմը՝ ձիերը դուրս բերեմ: Նս Արաբը չի գալի — կաղում ե:

— Աղա, Արաբը չի լծվի:

— Ինչի:

— Կաղում ե:

Ձարմացավ:

— Ինչ իս ասում: Ինչ ի պատահի:

— Ձեմ իմանում, աղա:

Նս գոմը մտավ, նայեց: Ձին գոմի մեջ ես կողմը տարա, ես կողմը տարա. ճիշտ վոր կարգին կաղում ե:

Նայեցինք վտար — ուռած տեղ չկա: Ձեմ ել հիշում վոր մի բանի դիպած լինել:

Աղաս թե՛ պետք ե բժիշկ կանչել:

Բժիշկն ել յեկավ քննեց — վոչ ուռած տեղ ունի, վոչ տաքություն: Նս ել թե՛ կտրելի յե քարի կամ փետրի յե դիպել:

— Թողեք մի յերկու օր հանգիստ, կանցնի:

Թողինք յերեք օր:

Յերեք օրից հետո նորից ուզեցի դուրս բերեմ — ելի յետի վտար քաշ ե տալիս. տռաջվանից ավելի վատ:

Փիրագոմը բարկացավ.

— Վոր ետենց ե, պտի ծախեմ...

Խոսքը՝ խոսք եր:

Առնողներ յեկան տեսնելու:

Դուրս քաշելիս նկատեցին կաղում ե — չուզեցին:

— Մեզ կաղ ձի հարկավոր չի...

Նրանց դնպուց հետո գոմը մտա, — տեսնեմ Արաբս կապը կարած ման ե գալիս գոմում... Վոչ կաղում ե, վոչ բան... Ման ե գալիս իսկական առողջ ձիու պես:

Ել տեղը չկապեցի: Ուրախությունից վազեցի Փիրագոմի մոտ:

— Աղա, ձին լավացել ե:

— Ճիշտ:

— Ճիշտ, աղա, ել չի կաղում:

— Արա տեսնեմք:

Գնացինք գոմից նայեցինք: Իսկապես՝ ձին կարգին ման ե գալի, վոչ կաղ, վոչ մաղ:

Ուրախությունից Փիրագոմը վազեց ձիու ճակատը համբուրեց:

— Ձուր տեղ եմ ուղում ծախեմ, — ասում ե — Սեր, Սերոբ, լծենք գնանք Որթաճալա:

Կառքը մաքրեցի, բարձերը թափ տվի ու գնացի ձին գոմից դուրս բերեմ: Նն ե՝ նոր շեմքին ելի հասցրել, տեսնեմ կաղում ե ելի:

Ինչ պատահեց ես անիրավին, մտածում եմ, չե՛ վոր քիչ առաջ կարգին ման եր գալի:

Փիրագոմն ել յեկավ զարմացավ.

— Վահ, ինչ պատահեց, առ:

— Ձեմ իմանում, — աղա.

Բայց սիրտս կասկած ընկավ:

Ճեստեղ մի բան կա, ասում եմ, ու փորձի համար կանգնել եմ դուրսը, դռան յետևն ու նայում եմ թաքուն տեսնենք ինչ ե անելու:

Չանցավ մի քանի բուպե, դա տեղը թողեց ու գնաց մյուս ձիերի կողմը: Ձարմանք բան, ել չի կաղում, վոչ թե վտար քաշ չի տալիս, իսկի թեթե ել չի կաղում:

Գնաց մինչև գոմի ծերը, հոտոտեց ձիերին, մեկի կող-
քին խոփեց մոռութով, մեկերի պոչի վերևը կծեց, խեղճ ձիուն
ծուլ արավ ու նորից հանգիստ, առանց կաղալու յեկավ
մյուս ծերը: Եսպես մի քանի անգամ գնաց-յեկավ, գնաց-
յեկավ: Թե յես կաղում եմ, նա յեկ ենպես:

Եղ վոր տեսա, ներս գնացի՝ դրան դուրս բերեմ:
Բայց նորից — քաշեցի թե չե — սկսեց կաղալ:

— Վայ, անիրավ, վայ...

Փիրադովին հայտնեցի, շատ զարմացավ. ինքն ել յեկավ
նայեց, փորձեց. ձիշտ վոր գոմում հանգիստ ե, բայց
ուղեցինք դուրս բերել թե չե, յետի վտոր քաշ ավեց ելի:

— Մի, դու, լութի, — ծիծաղեց Փիրադովը: — Մեզ ձեռ
ես առել, տո:

Մյուս ուր փորձեցինք, ելի նույնը:

Թե յես, թե Փիրադովը չենք հասկանում՝ ինչու յե
ձին եղպես անում:

2

Մի որ ել Փիրադովը իր սպիտակ ձին — Շաքրոն նրա-
տես գնաց ձիարդավի: Յես ել Արաբին դուրս բերի, վոր
ինքս ել գնամ թամաշա: Ուզում եյի տեսնել, թե Փիրա-
դովը վոնց ե քշելու: Լսել եյի, վոր լավ ձի քշող ե, բայց
չեյի տեսել:

Գոմից դուրս բերելիս՝ Արաբն ելի կաղում եր:

Վոնչ ուզում ես արա, սսում եմ, սատկես ել, պիտի
նստեմ:

Թամըը դրի. ձին ուրախացավ:

Վա ինչ բան ե, — մատծեցի, — ինչու յե խրխնջում,
կառքին չեմ լծում, ով դիտի, դրա համար:

Վտա դրի ապականդակը — դա ծառա ելավ, շարժվեց
մինչև մեկ ել վտա տեղը կշնեյի, վաղեց փողոց:

Իսկ փողոցում դնաց ջրի պես: Յետի վտոր չեմ տես-
նում, բայց հասկանում եմ, վար կաղ ձին եսպես չի գնա:
Վոչ թե գնում ե, կարծես խաղ ե անում, վտան ել գետին
չի առնում: Իսկ յերբ տեղ հասանք, դա վազող ձիերին
վոր չտեսավ — չորս վոտ ուներ, չորսն ել փոխ ուտալի:
Մաղես ե վազում, աղա յես՝ վրան մնա: Մանձր քաշել —
կպել եմ մեջքին, ու անից սիրտս կուչ ե յեկել, շուր ե
կաղել:

Վաղեց դա, վաղեց քամու պես, ել չհասկացա վոր-
տեղից անցավ, վոնց անցավ մին ել ընդ՝ վազող ձիերի
յետևից ե ընկել ու գնում ե: Վոչ թե վազում ե, այլ
թուշում, մենակ են եմ տեսնում, վոր հրես մի ձի յես
մնաց, մի ուրիշն ել... Ենպես արագ ե գնում — շշմում եմ,
աչքերս փակում եմ, վոր գլուխս չստուվի, իսկ եղ անի-
րավը թուշում ե, թուշում, վորալես հրեղեն:

Վես ե՝ գետնովը պիտի տա, հազար թիքա անի, մտա-
ծում եմ կուչ եկած:

Մեկ ել ծափերի, «ուռաների» ձեն եմ լսում, ու ձին
կանգնում ե հանկարծ:

Աչքերս բաց եմ անում, տեսնեմ՝ մարդիկ վազում են
դեպի ինձ:

— Սյ կեցցե, կեցցե...

Բանից դուրս յեկավ, վոր Արաբը բոլորի առաջը կրու-
րել անցել եր:

Գիչ հետո՝ Փիրադովը ել յեկավ. փաթաթվում ե ինձ,
փաթաթվում ե Արաբին ու համբուրում:

Եստեղ իմացանք, վոր Արաբը սուսա եր կաղում: Փի-
րադովը չեր իմացել՝ ինչ ձի յե առել:

Արաբը նստելու, եսպես տեղեր քշելու ձի յեր, վոչ
թե կառքին լծելու:

Մի, կենդանիների մեջ եսպես խելոք, խորամանկն ել
ե սլատահում...

Յերբ Իգայի մայրիկը Շմիդտի ճամբարից ոսպիտ-լուր ստացա՛վ, վոր «Ձեյուսակինի» խորտակումից հետո նա՛վորդ-ներն սննդաւ իջել են սառուցների վրա, ուրախացա՛վ:

— Գլխա՛վոր վտանգն անցել է, — ասաց նա, — մեք կա-
ռա՛վարությունն այժմ ամեն միջոց գործ կընէ նրանց
ազատելու համար:

Իգան նույնպէս ուրախ էր. դասերը պատրաստելուց
հետո նա բա՛լը վազեց ու կանչեց.

— Մյ, տղաներ, աղջիկներ, յեկե՛ք ճամբար խաղանք:
Հավաքվեցին, ու սկսվեց մի մեծ, հետաքրքրական խաղ:
Ձյունի ու սառցի մի մեծ կույտի վրա, բակի մեջ-
տեղում ճամբար շինեցին ու դրոշակ ցցեցին:

Ողաչաւի տղան՝ Պետիկը, հաստ ձայնով ասաց.

— Սռա՛ջ կազատենք կանանց ու յերեխաներին:

Նրա յետեից կանգնեց Լիգան՝ իր տիկնիկի հետ
Սայան ու Նինան:

Պետիկն ուռցրեց շրթունքները, թափահարեց թևերն
ու առա՛ջ սլացա՛վ:

— Իմ յետեից, դեպի ցամաք, թռչո՛ւմ ենք...

«Յամաքը» գտնվում էր սլստոգամբում, և Պետիկն իր
սավառնորդներով շուտով հասա՛վ այնտեղ:

Հանկարծ վրա հասա՛վ քեռի Սիմոնը՝ դռնապանը, ամբլթ
թափահարեց ու գոռաց.

— Յես ձեզ ցույց կտամ: Նա ի՛նչ անկարգությունն էր
ձյունի ցաք ու ցրվի եք տվել. մյ թե գործ եք գտել...
Յերեխաները ցած իջան ձյունի կույտի վրայից:

Բակի ծայրում յերևաց ցրտի ու սառցի մասնադետ
Վասիլը, վորին յերեխաները «Բեռի-սառուց» եյին կանչում:
Վասիլը միշտ հով տեղերում էր պռովում, սառը ջուր էր
խմում ու ինքը սառուց էր պատրաստում. յերեխաներին
միշտ հյուրասիրում էր իր պատրաստած համեղ ու սառը
պաղպաղակով:

— Ինչո՞ւ յես խանդարում յերեխաներին, ափսոսում
ես, ինչ է, ձյունն ու սառուցը, — ասաց նա Սիմոնին:

— Մեկարգությունն է, թե՛ խաղ է, — մըթմըթաց Սի-
մոնը.

— Վոչինչ, յերեխաներ, Սիմոնը փոթորիկ է, վրա
կտա, կաղմկի, հետո կհանդարտվի... կքնի: Յես ձեզ հո-
մար յեղանակի բյուրո կդառնամ ու միշտ կասեմ, թե
յերբ կարելի յե խաղար յերբ՝ վոչ:

Ու կանգնում էր պատուհանի առաջ ու կանչում.

— Բաններդ բուրդ է, փոթորիկն է դալիս...

Յերեխաները գիտեյին, վոր դռնապան Սիմոնն է դա-
լիս, պետք է ծլկել:

Մեկ ել տեսնես՝ «Բեռի-սառուցը» գոռում էր.

— Յերկինքը պարզ է ու մաքուր. կարող եք թռչեր

Բայց մեզ որ ել դռնապանը քարուքանդ արեց
սառցի կույտը. ջրերը հոսեցին բռկի այս ու այն կողմը
նազը խանդարվեց. յերեխաները տխրեցին:

— Վոչինչ, — ասաց Վասիլը, — քանի յես յեղանակի
բյուրոյի վարիչ եմ, հանդիստ յեղեք. վաղը նորից ձեք
խաղը կսկսեք:

Յեվ խեղապես՝ մյուս որը բախում բոլոր ջրերը սա-

ուել ելին, որը տաքանում էր, ձյունը հալչում, բայց փայտանոցի կողքին լճացած ջուրը պինդ սառած էր. Պետին արդեն չմռչկներով էր «ազատում» ճամբարայիններին ու «ցամաք» տանում: Մառցե բլուրը շատ դանդաղ էր հալչում, ընկառանը կոտորատում էր սառուցը, բայց հետեւյալ առավոտ ելի սառչում էր թե լիճը, թե բլուրը:

Վոչ վոչ չէր հասկանում ինչն է գաղտնիքը:

Մայրիկը գիտեր, բայց նա որեցոր սպասում էր հայրիկին ու ասել էր, վոր մինչև հայրիկի գալը կարող են խաղալ:

— Գիտե՞ք, յերեխաններ, — ասաց նա մի օր, — վերջին ճամբարայիններն արդեն թուել են ցամաք. բոլորն էլ ազատվել են և շուտով կլա նաև Իգայի հայրիկը:

Բոլորն ուրախացան, մանավանդ Իգան:

Յերբ Իգայի հայրիկը վերադարձավ, յերեխաններն էլ չեղին խաղում, «ճամբարը» դատարկ էր. նրանք շրջապատում էին Իգայի հայրիկին, վորը պատմում էր «Ձեկուակին» նավի, ճամբարի, ողաշունների ու սպիտակ արջերի մասին:

Մայրիկը հրավիրեց «Քեռի-սառուցին» և խնդրեց պատմել մշտական սառցի մասին:

— Յերեխաններ, — ասաց Վասիլը, — յես աշխատում եմ սառցաբանում և գիտեմ արհեստական սառուց պատրաստել: Այդ սառցի կտորները կարող են սառեցնել գետը, լիճը: Ահա թե ինչու ձեր ճամբարը միշտ սառչում էր. այդ յես եյի սառեցնում:

Հայրիկը նույնպես ուրախ էր, վոր Վասիլն սգնել է յերեխաններին:

Մեր վառ աշխարհն ամեն մի մասում շրջում է նա միշտ ու միշտ. ուր հազար-հազար մանկիկներ հասուն այժմ խլրտում են անվիրտ:

Պրոներական գնդերն են հուզված, թմբուկն է թափով թնդում.

Իլլիչը հիմա շարքերին ձուլված յերգում է, հուզվում, խնդում:

Յեվ փոքրիկ-փոքրիկ հոկտեմբերիկներ — դեռ թոթով, թիթեռ, անուժ. Լենին պապիկը ժպտում է հետներ ու շոյում նրանց անուշ:

Դու, թուխ ու թոթով, թմբիկ թմբկահար, թող թմբուկդ թունդ թնդա, Իլլիչի հետը թող սովետական մեր լայն աշխարհը խնդա...


44. 1924 թ. հունվարի 21

Մոսկվայից վոչ հեռու, Գորկայում, 1924 թ. հունվարի 21-ին մեռավ Վլադիմիր Իլլիչ Լենինը. նրան թաղեցին Մոսկվայում:

Խիստ ցուրտ էր, սակայն փողոցները լիքն էին:

Բոլորը գալիս էին հրաժեշտ տալու իրենց մեծ առաջնորդին, սիրելի ղեկավարին:

Յերբ դադարն իջեցրին գերեզման, մեր վողջ յերկրի
գործարանների շէտները շչացին, գնացքներն ու նավերը
կանգ առան:



Հիմնարկները փակ եյին. լույսերը հանգան ամեն տեղ,
անցորդները չեյին շարժվում փողոցում, ճանապարհին:
Կյանքը կանգ առավ վողջ յերկրում:
Ու հինգ ըոպե անընդհատ շչում եյին շչակները...

45. Վլադիմիր Իլյիչի հետ սանատորիայում (1918 թ.)

Մի անգամ հայրիկս սանատորիա գնաց Վլ. Իլյիչի
հետ տեսակցելու ինձ ու յեզորս ել հետը տարա՛վ: Յերբ
տեղ հասանք, յես և ընկերուհիս սկսեցինք այգում խոս-
զուլ, իսկ հայրիկս խոսում եր Իլյիչի հետ:

Հետո մեր խաղին միացավ Վլ. Իլյիչը. մենք խփում
եյինք իրար ու փախչում. յեսեկից վաղելիս յես պինդ ընդ-

նեցի Վլադիմիր Իլյիչի թեւ. նա պոկ յեկավ ու սկսեց
ծիծաղել ինձ վրա՝ ասելով.

— Ձրոնեցիր, չրոնեցիր:

Յես հարցրի.

— Ինչպե՛ս թե, չե՞ վոր բռնել եմ:

Բայց նա պատասխանեց.

— Դու վոչ թե ինձ բռնեցիր, այլ իմ բաճկոնի թեքը, —
ու փախավ:

Այն ժամանակ Վլ. Իլյիչի ձեռքը վիրավորված եր, նա
իր բաճկոնակի թեքը չեւ հագնում:

Այսպիսով Վլ. Իլյիչին չկարողացա բռնել:

46. Բանտում

(Լենինի քրոջ պատմածից)

1895 թ. Վլ. Իլյիչը բանտարկված եր Պետերբուրգում
(այժմ՝ Լենինգրադ): Իլյիչը մեկը մյուսից ավելի սրամիտ
միջոցներ եր հնարում ընկերներին դադարի նամակներ
գրելու. Վերադարձնելով ստացած գրքերը՝ Իլյիչը վորոշ
յերեսներին նշանակում եր տառերը կետերով: Այդ ցրված
տառերը վորոշ կարգով արտագրելով՝ ընկերները կարդում
եյին Լենինի նամակները:

Մի ուրիշ ավելի հետաքրքիր միջոց, վոր ցույց եր
տվել մեզ մեր մայրը. կաթով գրեին եր, վոր աննկատելի
հետքեր եր թողնում և կարգացվում եր, յերբ թերթը տա-
քայնում եյինք մոմի կամ լամպի վրա: Իլյիչը բանտում
ամեն ոք կաթ եր ստանում: Հացի խմորից նա շինում եր
մանրիկ թանաքամաններ և մի քանի կաթիլ կաթ ածելով
մեջը՝ զրում եր գրքի տողերի արանքում. գաղտնի գրու-
թյամբ Լենինը հայտնում եր, վոր գրքի այսինչ յերեսին

կաթնագիր նամակ և գրված: Այդ թերթերը պահում էինք կրակի վրա, տառերը պարզվում էին ու կարդացվում:

Թանաքամանները շատ փոքր եր շինում, վոր չնկատվի, իսկ նեղն ընկած ժամանակ կարողանա կուլ տալ: Ձե վոր նրան հետևում եր պահակը՝ դռան նեղ անցքից: Իլլիշը պատմում եր, վոր մի անհաջող որ նա վեց հատ թանաքաման կուլ տվեց:

«Ձկա մի ախլիսի դժվարություն, վոր չհաղթահարես վորես հնարագիտությամբ», — ասում եր Իլլիշը, և այսպիսի միջոցներով նա բանտում կարողացավ գրել բրոշյուրներ, կոչեր, գրեց նաև բանվորական կուսակցության ծրագիրը:



47. Վ. Իլլիշ Լենին

(Հին բանվորի պատմածը)

1

Մեկ անգամ իրիկունն ընկերոջս հրավերով գնացի նրա առևը. մոտ 20 մարդ արդեն հավաքվել էին. սրանց

մեջ եր նաև մի ծանոթ, շեկլիկ միրուքով մարդ, վոր ասում եր.

— Դուք աղքատ եք, վորովհետև ձեր աշխատանքից ձեր տերերն են հարստանում: Պետք է քշել նրանց, միանալ, ձեզ համար աշխատել:

Մենք ասում ենք նրան.

— Ճիշտ ես ասում, բայց վճեց քշենք, չե վոր նրանց կողմն ե ինքը՝ թագավորը...

— Առաջ հենց թագավորից պետք ե սկսել. իսկ սրա համար պետք ե կազմակերպվել, բանվորական կուսակցություն ստեղծել: Յեթե վողջ բանվորները վորքի կանգնեն, թագավորն ինչ կարող ե անել:

Լսում եմ ու մտածում. «Ճիշտ ե ասում»:

Հետո միայն լսեցի, վոր այս մարդը ինքը Լենինն եր, վորին յեռ առաջին անգամ տեսա:

2

Անցել եր մոտ 20 տարի. սկսվել եր մի մեծ, չտեսնված պատերազմ. շատ-շատերին կռիվ ուղարկեցին, բայց քչերը վերադարձան, այն ել՝ առանց վորքի ու ձեռքի:

Ինձ ել տարան: Ու միշտ մտածում եյինք, թե ինչու յենք կավում. ինչ կլինի սրա վերջը. արա այդ ժամանակ թուլցիկներ յերևացին, վորոնց մեջ գրված եր.

«Կորչի պատերազմը, կռիվը հարուստներին դեմ պետք ե ուղղել»:

Այսպիսի մտքեր Լենինն եր տարածում. այդ ժամանակ նաև նա արտասանմանում եր ապրում և այնտեղից մեզ ուզում եր, լուրեր ուղարկում:

3

Յերեք տարի կավեցինք, հալ չմնաց. և արա բանվոր-

հերն ու զինվորները վտարի յեկան: Սրեցինք այն, ինչ
 Լենինն եր ասում: Թագավորին քշել էյինք, բայց մի քիչ
 սխալվեցինք ժամանակավոր կառավարութեան հարցում
 նրանից բանվորներին ոգուտ չկար — կապիտալիստների:
 հետ էյին գնում: Սկսվեց մի վեճ — ո՞վ ե ժամանակավոր
 կառավարութեան հետ, ո՞վ ե դեմ: Մենք տեսնում էյինք,
 վոր քանի ամբողջ բանվորութիւնը մեկ մարդու պես չի
 կանգնած, բան չի դուրս դա: Յես և շատ բանվորներ
 մտանք բոլշևիկների կուսակցութեան մեջ. գործ շատ կար-
 ամեն տեղ ասում էյին. — Միացե՛ք կուսակցութեան շուրջը,
 պայքարը նոր ե սկսված»:

4

Մեկ անգամ լուր տարածվեց՝ «Լենինը դալիս ե»:
 Կայաբան գնացինք: Հրապարակը բռնել էյին զինվոր-
 ներն ու բանվորները:

Մոտեցավ գնացքը, սկսվեց շարժում, աղմուկ:
 Տեսնենք՝ զրահապատ ավտոյի վրա մեկը բարձրացավ:
 բոլորը ծափահարեցին:

Լենինն եր, շատ եր փոխվել, բայց ճանաչեցի:
 — «Ընկերներ, — ասում եր նա. — մի՛ք հավատա ժա-
 մանակավոր վառավարութեանը, նա հարուստների կողմն ե:
 Վերցրե՛ք իշխանութիւնը. վե՛՛ր թե գերմանացիների, այլ
 տերերի, բուրժուաների ու կալվածատերերի դեմ պետք ե
 կռուի»:

«Վողջ իշխանութիւնը խորհուրդներին»:
 Սյապես ել յեղավ: Մի քանի ամսից ամեն ինչ փոխ-
 ւեց: Դեցինք բուրժուաներին, կալվածատերերին: Հոգն ու
 գործարանները վերցրինք: Լենինի ասածի պես իշխանու-
 թիւնը խորհուրդներին անցավ:

Հիմա մեզ մոտ չկա շահագործում, բոլորն աշխատում

են ընդհանուրի ոգտի համար, իսկ ծուլերն ու լողները
 տեղ չունեն:

Լենինը ցույց տվեց ուղին, ոգնեց կուսակցութեանը,
 հավաքեց բանվորութեանը՝ կազմակերպեց: Լենինը միշտ
 կուսակցութեան ու բանվոր դասակարգի հետն եր, դրա հա-
 մար ել հաղթեցինք:

48. Ո՞վ եմ յես

Յես բերել եմ ձեզ գարուն,
 գարնան աղջիկն եմ սիրուն.
 քնից նոր եմ արթնացել,
 թերթիկներս ել դեռ թաց են:

Հիշում եք, չե՛, աշուն եր,
 չար քամին ձեզ քշում եր,
 այն ժամանակ յես հողում
 մրսում էյի, գողդողում:
 Յես մի փոքրիկ սերմի հատ,
 ցուրտ քամու դեմ հուսահատ
 մնացի յես մենակ, խեղճ
 չոր ամառի դաշտի մեջ:
 Ու մի ուր ել յես հողում,
 տեսնեմ, վոր ձյուն ե մաղում:

— Վա՛յ, կռիւլ ե, — ասացի —
 ու կռիւ մեջ մնացի.
 ձյունը փռեց. տաք վերմախ-
 իմ հագին ել մի բարակ
 շապիկ ունեմ, մի կեղե,
 տեսնես՝ հիմի վորտեղ ե:

Այսպէս անցաւ ժամանակ,
յես մեացի ձյունի տակ:
անցք բաց արի իմ շապկից
դուրս նայեցի այդ անցքից:
Տեսնեմ՝ ձյունը ջուր դառած,
կաթկթում ե վերից ցած:
Հասկացա, վոր մեր շող-շող
պայծառ արեւն ե հաղթող:
Մի որ ել յերբ վեր յելա,
արեգակն եր ինձ վրա.
տեսնեմ՝ արոտ ու հերկեր
տեղ-տեղ կանաչ են ներկվել:

— Հայ, հայ, դարձն ե, գարձն,
ուրախ կանչում ե առուն:
— Զան-ձան, — կանչում են հավքեր,
ուրախ յերգով ենք յեկեր:
— Հոյ-հոյ, — հովը շնկշնկաց,
ու սարերից իջաւ ցած:

Այսպէս իրար յետեից,
ամեն մեկը իր տեղից,
ձայն եր տալիս ու կանչում:
յերգում, ցնծում, կարկաչում:
Դե, ով եմ յես — իմացած,
ինչպէս ցրտին զիմացա...

49. Ծաղիկնեքի յերգը

ԱՐԵՎԸ. — Սիրուն աղջեկ, ինչ դրկեմ քեզ:
ԱՂՋԻՆԸ. — Յես ծաղիկներ կուգեմ պես-պէս:

ԱՐԵՎԸ. — Այ աղբյուրներ, այ գետակներ,
սառցի ներքե քնած եք դու:
Դուրս յեկեք, դուրս,
շուտ դեպի լույս,
նոր աշխուժով
ու նոր ուժով
կարկաչեցեք
ու կանչեցեք
հողում քնած սիրուններին՝
ծաղիկներին ու ծիւերին:
Վճռ-վռռ, վճռ-վռռ,
ես ինչքան սեռ...

ԶՐԵՐԸ. — քանի՜ քնեք հողի միջին.
յեկեք հստեղ սարի լանջին,
առլի ափին, հով սավերում,
ժայռի տակին, հովիտներում
կանաչ խոտով,
անուշ հոտով
ծիծաղեցեք
ու ծաղկեցեք:

ԾԱՂԻԿՆԵՐԸ. — Բարե՛, բարե՛, կարմիր արե,
մի, ինչ լավ ե դեպի վեր,
ազատ, լույս, տաք,
կապույտ — հստակ...

ԱՐԵՎԸ. — Սիրում եք ինձ:

ԾԱՂԻԿՆԵՐԸ. — Ա՛խ, եսպէս եմ սիրում, եսպէս,
եւ առանց քեզ չեմ ապրիլ յես:
— Յես քեզ հետ եմ, ուր վոր գնաս...
— Յես կտխրեմ, վոր հեռանաս...

ԱՐԵՎԸ. — Այ անուշներ,
այ քնքուշներ,

բաժակներդ բացեք իմ դեմ,
հաղար գույնի, հաղար ձևի,
պայծառ, ծավի ու ծարավի,—
լցնեմ շողով,
գոհար ցողով,
կյանքի հյութով,
անուշ հոտով,
այ անուշներ,
այ քնքուշներ...

Աղջիկը.— Ես ինչ անթիվ ծաղիկներ կան,
վոսկի դեղին, կարմիր դեղձան,
մուռ, ծիրանի, ճերմակ, պուտ-պուտ,
ալ, նարնջի, մավի կապույտ,
բացվել, լցվել, ծաղկել են վառ
վողջ ինձ համար, վողջ ինձ համար...

50. Գարն բիճու շերամապահությունը

Գնացի ձորից մի շալակ թթան տերև բերի, կապեցի
ամբարի վտախն ու ճիճուն վրան ածեցի ինչքան մարդ
յեկավ նայելու, վոչոքի տուն չթողինք, վոր աչքով չտան
ասինք՝ թող մի տեսնենք՝ ինչ ա դուրս գալի Այ տղա)
եդ անտեր ճիճուները մի քանի որ կացան ու կոտորվե-
ցին։ Հիմա թե ասենք՝ նրանից եր, վոր գոմշի ձաղը շատ
եր մոտիկ կապած, վոտնատակ եր տալիս, թե նրանից եր
վոր հավերը տուն եյին թափվում, կոցահարում. դե վո՞նց
անենք, Հո չեյինք կարող հավերը կոտորել կամ ձագն
սպանել։ Թե ասենք՝ անձրևիցն եր, վոր յերդկովը ներս
եր թափվում. մին ել մարդ միտք ե անում, թե բա քա-
ղաքում անձրև չի գալի... Մի խոսքով բանը գլուխ չեկալի

Տեսանք, վոր մեր յերկրումը արբուսի ճիճուն աճում
չի, բան չի դառնում։

Դե, զարմանալու ինչ կա վոր, ենպես յերկիր կա՝
հավը չի ապրում, ենպես յերկիր կա՝ ցորեն չի դուրս
գալի...

Ամեն աշխարհք մի տեսակ բնություն ունի։

51. Ճնճդուկ

Վորսորդությունից վերադառնալիս յես անցնում եյի
պարտիզի միջով։ Շունս վազում եր իմ առջևից, Հանկարծ
նա իր քայլերը փոքրացրեց, կարծես թե վորսի հոտ եր
առեր։

Յես նայեցի փոքր ինչ հեռուն և տեսա մի ճնճդուկ,
վորի կառուցի շուրջը դեռ դեղին եր։ Նա ցած եր ընկել
բնից և անշարժ պառկել մենակ ու անողնաէան։

Յերբ իմ շունը ծանրաքայլ մոտենում եր նրան, հան-
կարծ մոտակա ծառի վրայից մի պառավ, սե կրծքով ճնճդուկ,
քարի պես նետվելով, ընկավ ուղղակի նրա առաջը և հու-
սահատ ու սաստիկ ճըվճըվոցով մի յերկու անգամ լիտով
ուղղակի դեպի շան դուռչը։ Նա հարձակվեց, վոր փրկի,
պահպանի իր ձաղը։ Բայց նրա փոքրիկ մարմինը դողում
եր վախից։ Նրա ձախը կառապի յեր. նա ուժից ընկնում
եր։ Ինչպիսի՞ ահագին հրեշ պիտի յերևար նրան շունը,
բայց այնուամենայնիվ նա չկարողացավ հանդիստ նստել
բարձր ու անվտանգ ճյուղի վրա և վայր ձգեց իրեն այն-
տեղից։

Շունը կանգ առավ, յես քաշվեց։

Յես շատպեցի շփոթված շանս յես կանչել և հեռացա՝
Վաղա՛յ իմ մեջ հարգանք դեպի այդ փոքրիկ թռչունը։

(Սոսակ)

1

Իշուկը մեկ սոխակ տեսավ.
— Մեկ ինձ նայիր,— նրան ասավ.—
ասում են՝ դու լավ ես յերգում,
բայց չգիտեմ՝ ճիշտ են ասում:
Յես ականջներ ունիմ լայն-լայն,
լավ եմ լսում ամեն մի ձայն...
Այս լավ յեղավ, վոր քեզ գտա.
Դե, մեկ յերգիր, մեկ բլբլա,
տեսնեմ, ուղիղ՝ լավ ես յերգում,
թե իզուր եմ այնքան դովում:

Մնամեղ սոխակը նազ չարավ,
սիրուն կառուցը բաց արավ.
ուղեց ցույց տալ մեր իշուկին,
վոր զուր չեն գովում սոխակին:

Ձայնը լարեց և սկսեց...

Սոխակի ձայն... ինչեր չասեց.
մեկ խոսում եր ու մեկ յերգում,
հազար խաղով խաղացնում.
մեկ դայլայում, դըլդըլնում,
մեկ գեղգեղում, կըկըլցնում,
այնպես շվում, սրնգում եր,
վոր սար ու ձոր զրնգում եր:
Լեռ քարերն ել դարձրին ուշ,
այնքան քաղցր եր, այնքան անուշ:

Տախրներն ել չարածեցին,
այլ նստեցին, ականջ դրին.
տավարածն ել շունչը քաշած
սոխակին եր լսում աղչած:

2

Վերջապես սոխակը լռեց,
իշի վճռին ականջ դրեց.
— Եհ,— եշն ասաց,— վատ չես յերգում,
լավ ես ծվում ու ծվծվում,
բայց յես շատ եմ ախոսում քեզ,
վոր չես յերգում աքլարի պես.
յեթե մեր աքլարին տեսնես,
նրա յերգին ականջ դնես,
այնուհետե նրա նման
դու ել կերգես շատ անմահ:

Այս վճիռը վոր իմացավ,
մեր սոխակը նոր աչք բացավ.
նա նոր տեսավ, վոր իր դիմաց
մի անձարակ եղ ե կանգնած:
Թեև խփեց, թափ, զնաց,
իշի աչքին ել չերևաց:

53. Սղվեռն ու իր ձագուկները

1

Հոր մահից հետո աղվեսի ձագուկներն հագնեցին
ձովին մոր վրա յեր ընկել: Վերջինս աշխատելով յերկուսի

տեղ, ժամանակ չեր ունենում վոչնչացնելու դեպի վորջը
յեկող հետքերը:

Մի անգամ շները դտան դեպի վորջը տանող թաղմ,
տաք հետքերը և հոտ քաշելով իմացան, վոր աղվեսի բոլոր
ձագերն իրենց վորջումն են:

Վորջատեղի գազանիքն արդեն բացված էր, ամբողջ
ընտանիքն ել մահվան մասնաված:

Վորտորդները շրջապատեցին վորջը. շները կանգնած
սպասում էին: Շուտով մոտակա անտառից յերևաց մայր
աղվեսը. նա իսկույն իր յետևից բաշ տվեց շներին, վորոնք
գետի հոսանքով սլացան ներքև: Աղվեսը հարմար վարկյա-
նին բաժանվեց շներից ու թռավ դիմացից յեկող վոչխարի
շալակը: Ահաբեկված կենդանին աղվեսը շալակին վազեց
մի քանի հարյուր քայլ, ապա աղվեսունին թռավ գետին և
հանգիստ դնաց դեպի իր վորջը:

Շները նրա հետքը կորցրին և խորամանկ աղվեսն այս
անգամ ել վրկեց իր ձագերին:

2

Վորջը բացված էր. մուտքի խորքում դանվում էին
չորս հատ թավամաշ աղվեսաձագ: Բունը քանդելու ժա-
մանակ յերեքը տրորվեցին. մնաց միայն մեկը, վոր հուսա-
հատ վնգվեցում էր: Սպանված ձագերին նորից նետեցին
վորջը և հողը վրա տվին: Մայրը սիրտ չեր անում մոտենալ:
Կենդանի ձագին տալան և շղթայեցին բակում: Հա-
վերը շրջապատում էին նրան. շատ անգամ նա փորձում
էր բռնել հավերին, բայց շղթան ձգում էր և փոքրիկ գե-
ղին փռվում էր գետին:

Դիշերը բակում թափված փայտերի վրա յերևաց ինչ
վոր կերպարանք: Աղվեսաձուտը հուզված թագնվեց իր
արկղում, սակայն իսկույն ելի դուրս թռավ ու ցնծությամբ

դիմավորեց իր մորը: Մայրը կայծակի արագությամբ բռնեց
նրան ու յետ վազեց: Բայց նրա հաշիվը սխալ էր: Շղթան
ձգվեց ու ձագին յետ շաղտեց մեծ թափով:

Մայրը չհուսահատվեց. գետնի վրա մեկնված կրծում
էր անողոք շղթան, իսկ ձագուկն, ողտվելով հանգամանքից,
ընկել էր մոր կրծքին ու ծծում էր:

Յերբ տան դուռը բացվեց, աղվեսը փախավ անտառ,
թողնելով ձագուկի մոտ յերկու սատկած անտառային մուկ,
դեռ տաք ու արյունոտ:

Պարզ էր, վոչ նա ընթերթ էր բերել իր գերի ձագի
համար:

3

Յիվ այսպես ամեն դիշեր մայրն այցելում էր իր ձա-
գուկին, ուտելիք էր բերում նրան ու կրծում շղթան. հենց
վոր աղմուկ էր լսում կամ տեսնում էր մեկին, անհայտա-
նում էր:

Չորրորդ դիշերը մայրը յեկավ առանց կերակրի:

Նա հայտնվեց ստվերի նման և յետ գնաց բերանում
մի ինչ վոր սև բան բռնած:

Առավոտյան ձագուկի բնի մոտ ընկած էր միայն
չկրծած շղթան: Յեղել են դեղքեր, յերբ աղվեսներն իրենց
ձագերին գերությունից ողբափելու համար, կծոտելով սաղա-
նել են նրանց:

Աղվես ել պատահեց այս անգամ: Մայր աղվեսը
կրծել էր ձագուկի վիզը հենց այնտեղից, վորտեղ շղթան
էր կապած և տարել էր նրա տաք մարմինն իր հայրենի
անտառը:

54. Դաշտի վարդը

Փաքրիկ աղան մի վարդ տեսաւ,
մի վարդ տեսաւ դաշտի միջին.
վարդը տեսաւ, ուրախացաւ,
մտաւ վաղեց սիրուն վարդին.
սիրուն վարդին, կարմիր վարդին,
կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասաւ. «Քեզ կպոկեմ,
այ կարմիր վարդ դաշտի միջին».
վարդը ասաւ. «Տես, կծակեմ,
վոր չմոռնաս քնքուշ վարդին».
քնքուշ վարդին, կարմիր վարդին,
կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր աղան պոկեց,
պոկեց վարդը դաշտի միջին.
փուշը նրա ձեռքը ծակեց,
բայց ել չողնեց քնքուշ վարդին.
այ իմ վարդին, կարմիր վարդին,
կարմիր վարդը դաշտի միջին:

55. Բարիկադի վրա

Բարիկադներում,
կռվողների հետ վորպես կոմունար,
մի աղա գերմեց տառներկու տարվան:

Պայթեց համադարկն ու աղան տեսաւ,
թե ինչպես ընկան իր ընկերները
բարձր պատի տակ:

Ու խնդրեց աղան.

— Թույլ տվե՞ք գնամ՝

կարոտած մորս

տեսնեմ, յետ դառնամ:

— Ծլկե՛լ ես ուղուս:

— Ո՛ր, վնչ, կապիտան,

կոմունարները չեն սարսուռ մահից:

— Իսկ տունն ո՞ւր ե ձեր:

— Հետու չի, այստեղ, շատրվանի մոտ:

Ու գնաց աղան:

«Ոնրեց», — ասացին զինվորներն ու սպան
ու քրքջացին բոլորը միասին...

Բայց լուեց ծիծաղն, յերբ աղան հանկարծ
դունատ ու հպարտ նորից հայտնվեց.
կանգնեց պատի մոտ, համարձակ կանչեց.
— Յես յեկն, հիմա կարող եք կրակել...

56. Մայիսյան յերթ

Մեր հաղթական յերթն ե այսօր,
աշխույժ, յեռուն փողոցով.
փողկապները՝ կարմիր-բուսոր
դրոշակների — ծփուն ծով:



Գալիս ենք մենք շարան-շարան,
յերգ ու նվագ չորս բոլոր.
բերում ենք մեզ հետ մարդկության
միշտ յերազած կյանքը նոր:

57. Մայիսի մեկն անցյալում

Նեղ փողոցում հավաքվել ե ամբոխը — մոտ հարյուր
մարդ:

Մանանդիստ են, լավում են ձայներ.

— Մեր արյունն են խմում, — ասում ե մեկը:

— Ճիշտ ե, — լավում ե մյուսների ձայնը:

Սուտջ ե գալիս Անդրեյն ու սկսում.

— Ընկերներ, ասում են՝ աշխարհում շատ ազգեր ու
ցեղեր են ապրում — հրյաներ, գերմանացիներ, թաթարներ
և այլն: Յեռ չեմ հավատում. կա միայն յերկու ժողովուրդ,
քրիստոնեական և անհատական — հարուստներ ու աղքատներ: Մար-

դիկ տարբեր ձևով են հագնվում, տարբեր լեզվով խոսում:
Բայց նայեցեք, թե ինչպե՞ս ե վարվում գերմանացի, ֆրան-
սիացի հարուստը բանվոր ժովովրդի հետ ու կհամոզվեք,
վոր նրանք բոլորն ել մեր թշնամիներն են. նրանց բկին
կանգնի...

Ամբոխի միջից լավեց հռիուց:


— Նայեցեք մյուս կողմը ե կտեսնեք, վոր ֆրան-
սիացի, թուրք, գերմանացի բանվորը — բոլորն ել շան կյանք
են վարում:

Լսողների թիվն ավելանում եր, նոր ու նոր մարդիկ
եյին գալիս. լուռ եյին, ձգում եյին վզները, բարձրանում
թաթերի վրա ու լսում եյին...

— Վստիկանները, — կանչեց մեկը:

Չորս ձիավոր վոստիկան ուղղակի վրա տվին, մըտ-
բալները թափ տալով ու գոռալով.

— Ցրվեցեք...



Մարդիկ դեմքերը խոթուեցին, ահամա ճանապարհ
տալով ձիերին. մի քանիսը բարձրացան սլաքներին:

— Խոգերին ձի յեն նստեցրել ու կոնչում են... մենք
ել ցույց կտանք, վոր կավել զիտենք, — լավեց մեկի հնչուն
ու համարձակ ձայնը...

— Սպասեցէ՛ք, — շնչում ե Մադրեյն ու հասկացնում
բնկերներին, վոր ցրվեն Ինքը մնում ե մենակ, փողոցի
մեջանգում. նրա վրա յեն գալիս գլուխները թափահարելով
յերկու հաղթանգամ ձի...

58. Փոքրիկ հեղափոխականը

1. Հառ յեսնիք

Այն, ինչ վոր յես պատմում եմ, շատ առաջ եր, ցա-
րախան կարգերի ժամանակ:

Ան ժամանակ յես ութ տարեկան եյի:

Մի յերեկո նստած դառ եյի սովորում, յերբ ներս
մտավ հայրս, մի կապոց ձեռինե Նա լվացվեց, փոխեց
շորերն ու մոտենալով ինձ, շոյեց մազերս.

— Վաղը մայիսի մեկն ե. Սրմի՛կ, ելի պիտի կովով
տանինք. յերբ դու կմեծանաս, ազատ սոցիալիստական կար-
գեր կլինեն, ել փոշ վոք չի խանդարի ձեր ուրախ մայիսը:

Հետո նա սկսեց ցածր ձայնով խոսել մայրիկիս հետ.
Բայց յես բոլորը լսում եյի. Ապա բաց արավ կտուրը,
հանեց մի կարմիր շոր ու տպագրված թերթերի մի հաստ
փաթեթ:

Հորս խոսակցությունից յես իմացա, վոր վաղը բան-
վորները պիտի ցույցի դուրս գալին ցարական կառավա-
րության դեմ. Կարմիր շորը դրոշակի համար եր, իսկ
տպագրված թերթերը թուուցիկներ եյին, վորոնց մեջ գրված
եր, թե բանվորները պետք ե միանան ե կովեն հին կար-
գերի դեմ:

Յես շատ եյի հետաքրքրվում, թե ի՞նչ ե լինելու մյուս
օրը. Հետո մտրուսն դրի՝ ինքս ել մի դրոշակ շինեմ ե առա-
վառը գնամ հայրիկիս հետ:

Վեր կացա, փնտրեցի իմ կարմիր թղթերը, մի փաթ
դրոշակ շինեցի ու մի փայտի կոթի տաքացրի. Հետո սպի-
տակ թերթիկներ կտրտեցի ու վրան գրեցի այն, ինչ վոր
հաճախ կրկնում եր հայրս:

— Կեցցե՛ հեղափոխությունը:

Հայրս նկատեց իմ խաղն ու մոտենալով, ծիծաղեց:

— Սրմիկ, — առաջ, — դու փոքրիկ հեղափոխական ես.

ինչ վոր յես անում եմ, դու ել կրկնում ես:

Յես կարմրեցի, բայց վոչինչ չպատասխանեցի. մրա-
քումս ասում եյի՝ թե իմանամ, հաջիկ, փաղե ի՞նչ եմ
անելու...

Հետևյալ առավոտը վաղ վեր թագ հորս հետ Թեյ
խմելուց հետո պայուսակիս մեջ դրի իմ դրոշակն ու թեր-
թիկները ե դուրս յեկա տնից, իբր թե ուսումնարան գնա-
լու, բայց մտքումս դրել եյի փողոցում սպասել հորս ե
գնալ նրա յետևից:

Մոտ մի ժամ սպասելուց հետո, մեկ ել տեսնեմ՝
հայրիկս դուրս յեկավ տնից ե գնաց դեպի քաղաքի կենտ-
րոնը. Յես իսկույն հեռուեցի նրան, աշխատելով հեռու մնալ
վորպեսզի նա ինձ չնկատի:

Բայց մի տեղ նա յետ նայեց. ուզում եր ստուգել,
թե իր յետևից փոստիկան կամ կասկածելի մարդ կո՞, թե չե՞:

Յերբ հայրիկս ինձ նկատեց, յերևում եր շատ դար-
մացավ ու, կանգ առնելով, ձեռքի նշանով կանչեց ինձ.
Յես ամաչելով մոտ վազեցի:

— Շատեղ ի՞նչ ես շինում, — հարցրեց:

Յես շփոթվեցի ու չգլխեյի ի՞նչ ասեմ. Կանգնել եյի
գլուխս կախ.

— Դե ասա, մի ամաչի:

— Ուզում եմ քեզ հետ դալ — առաջի յես, նայելով
հայրիկիս աչքերին:

— Չէ, չէ, շնորհ տրաւ, յետ դնաւ, ետոր յերեկոսները
չսկսեալ եւ դուրս գնաւ, կռիւլ եւ լինելու, ձիու վրասներէ տակ
կրնկնեա, հասկացանք:

Յետ տեղից չեյի շարժուում:

— Չես դնում,— հարցրեց հայրիկը,— յետ կարծում
եյի, թե դու հասկացող սողա յետ:

— Հայրիկ ջան, յետ ել եմ ուզում մայիսը տոնել,—
ասացի յետ արտասովորութիւնով:

— Այ թե չարաճճի յետ,— ասաց հայրիկը,— դե վոր
չես դնում տուն — լավ լսիր, ինչ վոր ասում եմ և ճիշտ
կկատարես. դնա մօտիւր, այ, եմ քաղաքային այգին ու ներ-
սից նայիր աջ կողմը. ամեն բան կտեսնես. միայն թե
դուրս չգաս այգուց. կկատարես, ինչ վոր ասացի:

Յետ խորք տվի, վոր այդպէս կանես:

Այդ բոլորը նա ասաց ցած ձայնով, վորակազի ան-
ցորդները չսեն. Հետո կուացավ ախանջիւ ապիւսցրեց.

— Վոչ վորք բան չասես և իմ յետեից ել չգաս:

— Լավ:

Հայրիկը մտավ գիմացի նեղ փողոցը, իսկ յետ դնացի
դեպի քաղաքային մեծ այգին:

2. Յուլիցը

Ներս մտա քաղաքային այգին ու նստեցի ցանկապա-
տին մօտիկ մի նստարանի վրա, աչքերս դեպի հրապարակը:
Բախական յերկար սպասելուց հետո, մեկ ել տեսնեմ —
զանազան կողմերից յեկան խումբ-խումբ բանվորներ ու
կանգնեցին հրապարակում, այգու գիմաց:

Յետ վեր թռա տեղիցս ու սկսեցի նայել աչքերս շորս
արած. ուզում եյի տեսնել հայրիկիս: Քիչ անց նա յեկ
յեկով իր խմբով: Սրտն հրապարակը լցել էր բանվոր-
ներով:

Յերկար մազերով մի մարդ թռավ բանվորների ուսերի
վրա ու սկսեց բարձրաձայն խոսել: Նա շատ նման էր մեր
ուսուցիչներից մեկին, վորին աշակերտները շատ եյին սի-
րում: Ինչ եր ասում նա — յետ լավ չեյի լսում, և ինչ
վոր լսում եյի, այն ել լսուի չեյի հասկանում: Միայն տես-
նում եյի, վոր բանվորները լսում են մեծ ուշադրութեամբ:

Ճառը յերկար չտևեց, սկսեց եր շտապել, վորովհետեւ
բոլորը գիտեյին, վոր շուտով կխանգարեն Յերկար մազե-
րով մարդը ծոցից հանեց թուղթիկներն ու մատ-մատ ցրեց
շորս կողմը, բարձր ձայնով կանչելով:

— Կեցցե՛ք սլոյեւաթարական հեղափոխությունը:

Բոլորը ձայնակցեցին — Կեցցե՛ք... Կեցցե՛ք...

Ողբ թնդաց բանվորների ուժեղ ձայներից:

Այդ ժամանակ հայրս ծոցից հանեց կարմիր դրոշակն
ու ամբաստանելով ձեռքի փայտին՝ բարձրացրեց վերեւ Բան-
վորներն սկսեցին յերգել մի հեղափոխական յերգ:

Յետ այլևս չհամբերեցի. վազեցի դեպի յերկաթե ցան-
կապառը, բարձրացա վերեւ ու հանելով իմ կարմիր թղթե
դրոշակը, սկսեցի շարժել աջ ու ձախ, առաւ կեցցե՛ք բոլա-
վելով իմ պատրաստած թուղթիկները զցեցի բանվորները
մեջ:

Բայց այդ բոլորը յերկար չտևեց. մեկ ել հանկարծ
նկատեցի, վոր ամեն ինչ իրար խառնվեց. մոտիկ վորոց-
ներից դուրս թափվեցին ցարական վոստիկաններն ու ձիա-
վորները և շրջապատեցին բանվորներին:

Սկսվեց կռիւլը: Վոստիկանները թրերը հոնած հար-
ձակվեցին, իսկ բանվորները — վորը փայտով, վորը քարե-
րով սլաշտաւանվում եյին:

Յետ նայում եյի, բարկությունից բռնեցներս սեղ-
մելով, արցունքներս դալիս եյին. ուզում եյի թռչել ցան-

հաղորտի աֆն կողմը. բայց ինչպես կարող եյի,— չե՞ մար խոսք եյի սպել հայրիկիս, վեր այգուց դուրս չեմ գա.

Հանկարծ մի վտառիկան նկատեց իմ ձեռքի գրոշապը, վազեց դեպի ինձ և ուղուս և քան թրու- շեղով, գրոշակը նորից ծոցս դրել ու սկսեցի վազել դեպի այգու հակառակ կողմի դուռը. Վտառիկանը թռավ ցանկա- պատի վրայից ու վազեց իմ յետևից. Բավական անդ յետև- վեցս ընկնելով, նա տեսավ, վեր ել չի կարող հասնել, կանգ առավ ու հեալով առաց.

— Այ դու սատանի ճուտ, յես քեզ ցույց կառամ. Բայց ինչպե՞ս պիտի ցույց տար, յես արդեն հեռու եյի...

3. Հայրիկս բռնաւ

Դուրս գալով այգու հակառակ կողմից, յես պտտվեցի ու նորից դուրս յեկա հրապարակը. Հանկարծ տեսա հայ- րիկիս ու ակամա կանգ առա. նրան տանում ելին յերկու վտառիկան, թևերից պինդ բռնած. Ինձ տեսնելուն պես հայրիկս աչք-ուներով նշան արալ, վեր գնամ, հեռանամ, բայց յես այդպես չարի, այլ մի փոքր սղախելով, սկսեցի հետևել նրանց. Այդպես դնալով, հասա վտառիկանատուն ու համոզվեցի, վեր հայրիկին ներս տարան. վազելով գնացի տուն.

Մայրս լեզապատառ սպասում եր փողոցում, մեր տան դռների մոտ.

— Արմիկ, եդ վերտեղից ես գալիս, մեր ե քո պա- յուսակը.

Յես պտտվեցի մայրիկիս իմ տեսածը. Նա մնաց զար- մացած ու ավելի վախեցալ.

— Արմիկ, եդ ինչպես դու համարձակվեցիր գնալ ցույցի. բա չե՞ս վախենում, մայ տղա.

— Չե, չեմ վախենում.— առացի յես ու պտտմեցի իմ գրոշակի ու ցրած թողցիկներ ժամին.

— Այ, տես իմ գրոշակը,— առացի յես, հանելով ծոցիցս իմ կարմիր թուղթը.

Տերեկոյան յես ու մայրիկը գնացինք վտառիկանատուն, բայց այնտեղ մեզ ասացին, թե հայրիկին արդեն ուղար- կել են դիտվոր բանտը.

Մյուս որը մենք հայրիկի համար անկողին տարանք, իսկ հետևյալ օրերին, յերեք ամիս շարունակ, տանում եյինք ուտելիքն — կամ յես, կամ մայրիկը.

Հայրիկս մայրիկից իմանալով իմ քաջության մասին, նամակով գրել եր (նամակն ուղարկել եր բանտից, զաղտնի).

— Սիրելի Արմիկ, յես իմացա քո հերոսության մա- սին. դու այժմ փոքրիկ հեղափոխական ես, բայց մի՛ շատ- պիր, լավ սովորիր, վերադադիր մեծանաս և մեր հեղափո- խական գործը շարունակես...

Այսպես եր հին մայիսի տոնը. — այն ժամանակ մայիսի մեկը տոնելը հեղափոխություն և կռիվ եր նշանակում. այն ժամանակ մենք կռվում եյինք, վերադադիր ձեզ՝ փոք- րիկներիդ համար ուրախ մայիս պատրաստեց.

59. Սովորում են պաշտպանել յերկիրը

Ինչպես յերեսներն ընկերացան Նուրային

Գնդաթիւն հետաքրքիր խաղ ե. պետք ե խաղան. չե՞ վեր այսօր հանգստի օր ե, ազատ ժամանակ ունենա Բայց յերեքով չի կարելի խաղալ, պետք ե չորրորդին գտնել. գնացին Պավլիկին կանչելու. սա յել հիվանդ ե — փորն ե ցավում. լուծողական ե խմել ու արուր նստել սպասում ե.

— Գիտես ինչ, Վանիկ, — ասում է Ահմեդը, — զնանք՝ Նյուրային կանչենք:

— Վատ չի լինի, — վրա բերեց Վանիկը, — Նյուրայի վտանները յերկար են, այծի պես կիւազի:

Կանչեցին Նյուրային:

— Յեկ, Նյուրա, մեզ հետ գնալիս խաղա:

— Կգայի, — ասում է Նյուրան, — բայց պետք է վտանգի մարդերը ջրեմ: Թե չե՝ արևը կտա, կթառամեցնի: Տեսան վոր յերկարում է, վորոշեցին:

— Յեկեք միասին ջրենք, մեկ-յերկու — կվերջացնենք: Թե չե՝ Նյուրան մենակ մինչև յերեկո քաշ կտա:

Ասածն արած եր: Մարդերը ջրեցինք ու տառն անգամ գնալիս խաղացինք:

Վանիկը հոր հետ քաղաք վերադարձավ:

Այդ որվանից յերեխաներն ընկերացան Նյուրային:

Իսկական է, քե՛ աչքերին է յերեվում

Ահմեդն իր մեծ յեղբոր հետ ապրում էր քաղաքի ծայրին: Տնից մի քիչ այն կողմ սկսվում էր դաշտը, վոր ծածկված էր թվումներով: Ավելի հեռուն յերևում էին բլուրը, չոած թևերով հողմադացն ու սրածայր գմբեթով յեկեղեցին: սրանց շուրջը՝ տներ, անտառներ, գունավոր տանիքներով: գյուղի նման էր, բայց գյուղ չէր:

— Ի՞նչ գյուղ է սա, — հարցրեց Ահմեդը յեղբորը:

— Սա խոմ իսկական գյուղ չի: հենց այնպես է շինած, իսկականի նմանեցրած է:

— Ինչպե՞ս թե իսկական չի, — զարմացավ Ահմեդը, բա տները, յեկեղեցի՛ն, հողմադացը...

— Հենց այնպես, իսկական չէ, հեռվից այդպես է թվում, վոր մասենաա, կանոնա...

Ահմեդը զարմացավ, բայց չհավատաց: Նրան այնպես թվաց, թե յեղբայրը կատակ է անում:

Ու այդ որվանից Ահմեդն ու Նյուրան հետևում էին, թե ինչպես բանակայինները գալիս են վտաով, ձիով, թընդանոթներով, անցնում են գյուղի շուրջն ու կռիվ են սարքում, պատերազմում: հեռվից նրանք լսում էին հրացանների կրակոցն ու թնդանոթների վորոտը, մարդկանց աղմուկն ու աղաղակը: Այսպես մի քանի որ անեց ե... բոլորը չքացան «Գյուղում» ել մարդ չէր յերևում: յեկեղեցու սրածայր գմբեթն ել չկար, հողմադացի թևերը պոկվել էին:

Յերբ ամեն ինչ խաղաղվեց, նրանք վորոշեցին «գյուղ» դնալ, մոտիկից տեսնել:

Խաղն ու իսկական կռիվը

Մյուս հանգստի որը չորս ընկերները «գյուղ» մտան: Նրանք շատ զարմացան. վոր վոչ վորի չեն պատահում: վոչ թե մարդ, կենդանի չկա, այլ մի թռչուն ել չի յերեվում:

Յերբ բավականին շրջեցին, նոր տեսան, վոր իսկապես վոչ մի գյուղ չկա: Տներն ել, յեկեղեցին ել, հողմադացն ել — բոլորը, բոլորը բարակ տախտակից են շինած, վոչ պատ կա, վոչ կտուր, միայն հեռվից թվում է, վոր իսկական են:

Կարծես թե մի անագին մկրատով կտրել են գունա-վոր նկարներ ու կապրել դաշտի միջին:

— Այ քեզ գյուղ, այ քեզ տուն ու յեկեղեցի, — ասում էին ու ծիծաղում: բայց թե ում համար, և ինչու էին շինած այդ խաղատները, վոչ վոր չկարողացավ դիմի ընկնել:

Միայն «գյուղից» դուրս գալիս նրանք հանդիպեցին

պահակին, վոր շատ զարմացալ, թե ինչպէս յերեխաներն աննկատելի կերպով անցել են այդ կողմերը:

Նա բացատրեց, վոր այս բոլորը շինել են ռազմական խաղերի համար և յերբեմն-յերբեմն այս կամ այն զորամասերը վարժություններ են կատարում, իսկական կովի պատրաստութիւն:

60. Արջի ու կատվի կռիվը

Կաղնին արջի մի փոքրիկ քոթօթ եր. նա ապրում եր իր մայր Մրթմրթանի հետ անտառում, հյուրանոցի մօտ: Վարսորդությունն այդ անտառում արգելված եր, այնպես վոր դադաններն այնտեղ հանգիստ եյին զգում իրենց: Հյուրանոցի տերը հրամայել եր խոհանոցի տվել-ցովները թափել շենքի յետևը գտնվող բացառ, վոր անտառի թափամաղ ընակիչներն ուտելու բան ունենան:

Հյուրանոցում ապրում եր մի սիբիրյան կատու իր ձաղերսփ: Յերը մրթմրթանը մոտեցալ խոհանոցին, կատուն իր ընտանիքով նստած եր քանդուխքի վերին առաիճանի վրա և առջանում եր արեւի տակ: Նա աչքերը բացեց ու տեսալ, վոր իրանից և իր ձաղերից յերկու քայլ հեռու կանգնած ե մի բրդառ հրեշ:

Կատուն ուղեց փախչել, բայց իսկույն հիշեց իր ձաղերին: Մեջքը գուրս ձգեց վորքան կարող եր, բութ ճանկերը գուրս հանեց ու սկսեց բարձր աղաղակել, կարծես առում եր.

— Կանգնի՛ր, այլևս վնչ մի քայլ:

Արջը կանգ առալ, ապա նստեց յետևի վոտների վրա և բարձրացրեց առջևի վոտները: Այս զրույթյամբ նա ավելի մեծ յերևաց: Միթե նա կվախենար մի փոքրիկ, չնչին գաղանից, վորին կարող եր միանգամից կուլ տալ:

Մրթմրթանն իջեցրեց իր առջևի թաթերը, սրտըրտալ վելով հարձակվելու:


Կատուն նորից աղաղակեց:

Ձաղերից մեկի թույլ մկալոցն ավելի ևս հուզեց նրան, և նա ուղղակի նետվեց արջի դնչի վրա: Տառնութ հասառ ճանկեր և մի բերան լիք տատաներ խրվեցին արջի մերկ բթի մեջ: Դա նրա մարմնի ամենազգայուն տեղն եր:

Այս հարվածից հետո կատուն նահանջեց դեպի այն կողմը, վորտեղ չեյին կարող հասնել արջի ճանկերը: Նա թռալ, բարձրացալ արջի մեջքը:

Արջը փորձեց պաշտպանվել, ցած գլորել նրան, բայց բանը վերջացալ նրանով, վոր փախուռտի դիմեց:

Կատուն ցատկեց արջի մեջքից այն բոկիցին, յերբ Մրթմրթանը սարսափած ու հուսահատված բարձրացալ ծառը:



Կատուն մնաց ներքևում, ուշադրությամբ հետևելով արջի շարժումներին և հսկելով չլինի թե ծառից ցած իջնի:

Կատվի ձագերը բոլորն առաջ յեկան և նստելով մոր
շուրջը՝ գմայլվում եյին նրա հաղթութեան տեսարանով:

Հայտնի չե, թե միջև յմեր պիտի շարունակվեր այդ
տարորինակ պաշարումը, յեթե հյուրանոցի խոհարարը տուն
չկանչեր կատվին:

61. Կռիվ գետի հետ

1

Բանվորները գետին առացին.

— Գիտես մեր վորոշումը քո մասին.

յեկել ենք ասա մենք՝

պատով առաջդ փակենք:

Դու պիտի

բարձունքից թռչես,

պու պիտի

մաշիններ շարժես:

— Վրչ, — մռնչաց ջուրը,

յես ձեզ չեմ լսի:

Չեմ լսի...

սպասիր.

ընկերներ, դենք գետի առաջ

յերկաթե պատ:

Յեվ սկսվեց

մի մեծ կռիվ,

իրարանցում:

Մտավ կռվի մեջ

հսկա կլանը,

վոր ձեռքով հանում է

քար, ավադ, ցեխ...

Մտավ կռվի մեջ

վորոդ լեքենան,

անսխալ խփեց

ջրին ու քարին:

2

Ու գետում, վորտեղ յերեկ

լողում եյին մակույկները,

այսօր աշխատում են

նավերը,

աղմկում եյին յեղեգները,

այսօր դղրդում են

մեքենաները:

Այն գետում, վորտեղ յերեկ

աղմկում եյին ձկները,

այսօր լսվում են պայթում,

ձայներ, իրարանցում...

3

Այսպես՝ որեր ու գիշերներ,

ջրերի հետ անլուին

բանվորները մղեցին

կռիվ, կռիվ, կռիվ:

Ու յերբ վերջացավ գործը,

նրանք կանչեցին վատահ.

— Ե՛յ, հին գետ հպարտ,

դրեցինք առաջդ պատ,

վորպեսզի քո ջուրը

չհոսե դուր:

Յեվ գետն իր սւժը տվեց,

վորակազի գալուցներն
աշխատեն թափով,
և կառուցման գործին
լծվենք յեռանդով:

62. Փոթորիկ

Կեսորին ողը դարձավ խեղդող և ծանր: Քիչ հետո
արեն ամպի տակ թափնվեց: Արևմուտքից գլուխ բարձ-
րացրեց մի սև ամպ և շտապով առաջ շարժվեց:

Ամեն ինչ տխրեց բնության մեջ: Կովերը գլուխները
կախեցին, ձիերը ունգներն ուռցրին, փնչացրին և բաշերը
թափ տվին: Շուտով լավեց մի դանդաղ, հեռավոր վորոտ:
Ամեն ինչ լուեց, կարծես սպասում էին ինչ վոր բանի:
Ուր գնացին թռչունները, վոր ախպես՝ թռչկոտում էին
և ուրախ յերգում: Ի՞նչ յեղան բզեզները, վոր շարունակ
բզզում էին խոտերի մեջ: Բոլորը թափնվել և լուել են:
Ծառերը դադարել են որորվելուց և կանգնած են ուղիղ:
Մարդիկ շտապում են քաշվել իրենց տները:

Տիրեց ընդհանուր լուռություն:

Հանկարծ անտառի կողմից անցավ մի թեթև քամի:
Իր սուր շնչով դիպավ մարդկանց յերեսին, աղմկեց տե-
րևների մեջ, շրխկոցով ծածկեց դուռը, փռվին հավաքեց,
պտտեց փողոցում և լուեց:

Սուրաց մի ուրիշ քամի, մտավ փողոցները, սասպալեց
մի քանի վտած տախտակ, ցած գցեց մի քանի կղմինդր
և հավերին քշեց պատերի տակ:

Անցավ: Նորից լուռություն տիրեց: Ընկան անձրևի խոշոր
կաթիլներ, և հանկարծ կայծակը փայլատակեց: Ամպը վորո-
տաց: Վախեցած ձին կապը կտրեց և թռկը վզին դաշտ վազեց:

Անձրևն սկսվեց և քանի գնաց հորդացավ, սաստկացավ:

63. Վերադարձ

1

Փողոցի մայրերով անցնում եր 10—11 տարեկան մի
տղա:

— Տացիա, — լավում և անկյունից:

Տղան դուխը բարձրացնում և Մրոտ, սլառառոտած
շորերով, իրեն հասակակից մի յերեխա մոտենում և նրան

— Ուր եյիր կորել եսքան ժամանակ: Վաճ, ես ինչ
ե. փրտեղից ես ճարել եզ լավ շորերը, — հարցրեց նա
դարմանքով:

Տղան ժպտալով ասաց.

— Ինձ այլևս Տացիա չեն կանչում:

— Մենք կարծում էյինք, թե քեզ արդեն բանտար-
կել են, իսկ դու գուգվել ես. ել լայեղ չես անում՝ մեզ
մոտ գաս, հա՛...

— Վոչ, — նեղացավ տղան, — չեն թողնում, գործեր
ունեմ, սովորում եմ: Գիտե՞ս, Պավլիկ, դու ել արի. ձեռք
քաշիր թավառելուց — քեզ ել կընդունեն:

— Ի՞նչ ես ասում, քիչ ե մնում սովածությունից
ուշաթափվեմ, ել ի՞նչ ուսում, ի՞նչ բան...

— Իսկ մենք կուշտ ենք, տեղերս տաք ե, ուտելիք-
ներս՝ առատ:

Պավլիկն ականջները սրեց և ավելի մոտեցավ:

— Այգիներ ենք գցել, մշակում ենք: Ներկայացում-
ներ ենք տալիս. յես ել եմ խաղում. թե իմանա՞ ինչքան
դու եմ. յեկ, դու ել յեկ, ընկերներին ել բերեք. չեք
փռմանի:

Պավլիկն իր ականջներին չեր հավատում: Նա ճիշտ
ե, լսել եր, վոր «խուժաններին» հավաքում են, ուսում են

տախտ, աշխատանք սովորեցնում, բայց չեր հավատում,
վոր ազատ կյանքը թողած «խուժանը» կարող է դո՛հ լինել
այլպիսի վիճակից:

— Պատմիր, ի՞նչպես ընկար այնտեղ:

— Մանկական կոմունայի մասին լսել ես Ա՛յ, այնտեղ
եմ լինում: Թե ինչպես ընկա՝ կպատմեմ: Գնանք:

2

— Հիշում ես մեր հին բնակարանը՝ այգու մոտ, ուր
քարե մարդիկ են կանգնած: Իրանցից առաջինը, վոր
ձեռքը մեկնած կանգնել է, անունը Կամո յե. նրա անունն
եմ կրում յես այժմ:

— Կամո:

— Հա, մեռած է հիմա: Կենդանության ժամանակ
նա հարուստների թշնամին էր, կռվում էր նրանց դեմ:
Հիշում ես, մի անգամ են այդում շատ ժողովուրդ կար
հավաքված. ինչ-վոր մարդիկ էյին խոսում, նրանք Կամոյի
կյանքն ու կռիվներն էյին նկարագրում:

— Հիշում եմ, հիշում, — գոչեց Պավլիկը. — նրանք բաց
արին այն սպիտակ քաթմանը, վորով ծածկված էր արձանը:

— Հա, են սրը մենք շատ սոված էյինք, դու մի տե-
ղից հաց ճարեցիր, իսկ ինձ ուղարկեցիք յերշիկ բերելու:
Յեա դադադողի մոտ մի խանութ, յերշիկներ թուրի: Ամեն
ինչ լավ կվերջանար, յեթե են անիծված խանութպանը
յետեիցս չընկներ: Հանկարծ վրա հասավ և զրպանիցս յե-
րշիկները հանեց:

Խանութպանն ինձ բռնեց, վտանների տակ դցեց, հենց
են և՛ ուզում էր ծեծել, յերբ մի անծանոթ յերիտասարդ
խանութ մտավ:

Նա ինձ ազատեց դադադած խանութպանի ձեռքից,
փաղաքեց, անունս հարցրեց և տարավ իր հետ: Ինչպես
տեսնում ես, այժմ պիտներ եմ... անունս ել՝ Կամո:

Պավլիկն ապշած, բեղանը բաց լսում էր:

— Ուրեմն սրանից հետո չե՞ս դա մեզ մոտ:

— Վշ:

Պավլիկը մտածմունքի մեջ ընկավ:

— Շատ եմ շտապում, Կամո ինձ հետ, — հարցրեց.

Կամոն:

— Իսկույն Մի փոքր ստապիր, մտածեմ: Տղերանց
հետ ել կռենովեմ և նրանց ել կասեմ: Դու վերադառնա
բնակվում:

Կամոն հասցեն տվեց:

— Այս յերեկո մեզ մոտ ներկայացում կա, անպատ-
ճառ յեկեր:

— Կգանք: Յտե՛ւ թյուն:

— Յտեսություն, չմոռանա, ինչ վոր ասացի:

3

Ավումբի դահլիճը լուսավորված է Մեծ բազմություն
և հավաքված: Յերեկոյթը շուտով սկսվելու յե, սակայն
Կամոն չի կարողանում հանգստանալ. կարծես թե մի բան
ճնշում է նրան, վազվզում է, շուտ-շուտ դուռն կողմն
նայում:

Յերրորդ դահլճը տվին. ուր վոր և՛ վարադույրը կբացվի:

Կամոն վերջին անգամ նայեց դեպի դուռը, սիրտը
թուլաց: Յերեկոյ Պավլիկի մոտ դեմքը, հետո՝ յերկրորդի,
յերրորդի Կամոն դիմավորեց նրանց:

— Ուր էյիք այսքան ժամանակ:

— Վաղուց ե դուրսն սպասում ենք։ Մինչև միջինը չվստահացանք ներս գալ։ ամաշում ելինք։

— Դե, գնանք նայենք, — առաջարկեց նա, — շատ սե-
նյակներ կան, բնիկերդարան, Լենինի անկյուն, նկարչական
սենյակ, մարդանքի դահլիճ։ Ի՞նչ եք կանգնել, գնանք, —
կրկնեց Կամոն։

— Ընկեր դեկավար, յեթե կարելի չե, մի յերկու ըո-
պե ինձ լսեք, պորժ ունեմ, — դիմեց Կամոն մի յերիտա-
սարդի և սկսեց նրա հետ խոսել։

— Շատ լավ, շատ լավ, ապրեն, — խոսակցությունը
վերջացնելուց հետո ասաց ղեկավարը Կամոյին։

— Ընկերներ, մի ըռպե թպասեցեք, — ասաց նա։

Պրոններներին շրջանում շուկ անցավ, յերբ ղեկավարը
բեմ բերեց Պավլիկին ու ընկերներին։ Նրանց հետ եր նաև
ժպտացող Կամոն։

— Ընկերներ, — սկսեց ղեկավարը, — այն ձեր նոր բա-
րեկամները, սրանց բերել ե Կամոն։ Ընդունեցեք, թող մեզ
մոտ ապրեն։ Սրանք ծնողներ չունեն և ստիպված ելին
թափառել փողոց-փողոց, փողորմություն խնդրել։ Այսոր-
վանից ձեր կողիկալը կլինի սրանց ընտանիքը։ Սովորեցեք
միասին և աշխատեցեք կատարել այն պատգամները, վոր
տվել ե մեզ մեր սիրելի առաջնորդը, մեր մեծ ուսուցիչը —
Լենինը։

Կեցցեններից ու ծափերից թնդաց դահլիճը։ Ռւրախ
եյին բոլորը, բայց ամենից շատ ուրախ եր Կամոն։

Չէ՞ վոր նա ինքն եր ապրել այն ծանր օրերը, չէ՞ վոր
այժմ նա իրեն բախտավոր եր զգում կոմունայում։

64. Բագուն անցյալում

Մենք տեսանք իբար նման ցած, խոնավ, կեղտոտ ու
մուխ սենյակների մի շարք։ Բակում թափված եյին խո-
ղովակներ, մեծ կաթսաներ, վորոնք յերկար ժամանակ դուրս
մնալով անպետքացիլ եյին։

Կիսամերկ յերեխաներ՝ նավթի մեջ թափախված,
մրոտ — խաղում ելին ձյունախառն ջրի հետ, վոր լճացել
եր բակի զանազան կողմերում։

Այստեղ ապրում եյին 300-ից ավելի բանվոր՝ իրենց
ընտանիքներով, վորոնք ամեն բան մոռացած՝ տանջվում,
չարչարվում եյին, վոր մի կերպ ապրեն։

Բակում յերբեմն յերևում եյին կանայք։ Նրանք մինչև
սրունքները նավթի մեջ եյին։ Նավթի դուլերը ձեռքերին՝
շտապում եյին դատարկելու և նորից գնում կեղտոտ նավթ
հավաքելուն, վոր սլառահմամբ թափվել եր փողոցով
անցկացրած խողովակներից։

65. Բագուն այժմ

Դժվար ե ճանաչել Բագուն։ արգեն վերացել են «Թուր-
քական» թաղի տխուր տպերակները, բացված են նոր լայն
փողոցներ, աճել են ծառերը, վորոնց կանաչը կեսգանաց-
րել ե շենքերի գորշ տեսքը։ Ծովափնյա ծառուղին ժպտում
ե փարթամ կանաչով, ազմկում են տրամվայի վագոնները։

Այլևս չեն յերևում սավաններում պարուրված կանանց
տխուր ստվերները։ Չկան մուրացկաններ, չկա և՛ շուայու-
թյուն, և՛ անամոթ շքեղութուն։ աղքատության կողբին

Վխտում են ուրախ և առողջ մանուկներ, և յես չկա-
րողացա տարբերել՝ վորն ե թուրք, վորն՝ ռուս։

66. Տեքստիլում

Մանում են, մանում են ճերմակ թելերը,
մեր լայն դաշտերի բամբակը մաքուր,
ջահել բանվորները, առույգ թևերը
գործում են անվերջ, ուրախ հասերգում:

Յեկել ե բամբակը, հասել ե, հոսել,
անցել ձեռքերով բանվոր վաշտերի,
բամբակը ուրախ մի յերգ ե հյուսել,
վոր հետն ե բերել զնգուն դաշտերից:—

— Գնանք գործարան, մալանչներ դառնանք,
թելիկներ լինենք, գործենք վառ կտավ:
մեզ խնամել ե մի հզոր բռնակ՝
աղաա աշխարհի արեգակի տակ...

67. Կանաչ քաղաք

1

Հին քաղաքում, հին անակում ապրում եյին Աշիկն ու
Ծիաիկը:

Հայրիկն աշխատում եր գործարանում:

Աշիկը դպրոց եր հաճախում:


Տատիկը ճաշ եր յեփում:

Ծիաիկն ավերող որը խաղում եր:

— Զանձրացրել ե ինձ ես սլքմուսը, — փնթփնթում
եք տատիկը:

— Զանձրացրել են ինձ թաց շորերն ու սաղնահոտը, —
զանգատվում եր մայրիկը:

— Իսկ դուք բոլորդ ել ինձ եք ձանձրացրել, — ասում
ե Աշիկն ու փակում ականջները, վոր չխանգարեն դաս
սովորելու:



2

Դուռը բացվեց ու ներս մտավ հայրիկը:

— Հավաքեցեք իրերը, — ասաց հայրիկը, — զնում ենք
նոր բնակարան:

— Նոր տուն, — հարցրեց մայրիկը:

— Վոչ, — ասում ե հայրիկը, — նոր քաղաք:

— Թիֆլիս, — հարցրեց տատիկը:

— Բաղն, — հարցրեց մայրիկը:

— Վոչ, — ասում ե հայրիկը, — կանաչ քաղաք: Ան-
տառում նոր գործարան են կառուցել և նոր քաղաք են
ջինում բանվորների համար:

Փոխադրվեցին նոր քաղաք:

3

Մտնեցան նոր տանը:

Տան վրա գրված ե «Տուն-կոմունա» № 10.

Տնից մի մալդ դուրս յեկավ:

— Յեա կոմոնայի հերթապահն եմ, գնանք ներս, —
ասաց նա:

Ու ներս տարավ նրանց:

Մոտեցան յերեք դռան:

— Ահա ձեր սենյակը, — ասաց հերթապահը հայրիկին:

— Ահա ձերը, — ասաց տատիկին:

— Իսկ այս՝ մայրիկի սենյակն է:

Ներս մտան առաջին սենյակը, վնչ սեղան կար, վնչ
աթոռ ու մահճակար:

— Վերտեղ էլան տամ վերադրուս, — հարցրեց հայրիկը:

— Սպիտակեղենը վերտեղ գնեմ, — ասում է մալրիկը:

— Դուստրս վերտեղ պարզապես, — հարցրեց Աշիկը:

4

Հերթապահը մոտեցավ պատին, սեղմեց կոճակը, պատը
բացվեց, յերևաց պահարանը:

Մոտեցավ մյուս պատին, քաշեց փափանը — պատից
դուրս յեկավ մահճակալը:

— Կավ կլինե՞ր մի լողանայինք, — ասաց հայրիկը:

Հերթապահը բաց արեց մի դռնակ, փոքրիկ սենյակ
եր՝ պիտակ, առատադը ծակ-ծակ, ծակոտիկներից տար
անձրև եր թափում:

Լողացան բոլորը Ծիտիկին մայրիկը լողացրեց:

Բազմած ենք, մի բան ուտեցինք, արտեղ խոհանոց
չկա, — հարցրեց տատիկը:

— Այ, այն մեծ տանը, — ասաց հերթապահը:

— Ամանը ձեռքիս վանդ տամ փողոցով...

— Վնչ, առանց ամանի գնացե՞ք ճաշարան, նախաճաշ
չեցե՞ք, — ասաց հերթապահը:

Դնացին:

Յերբ վերադարձան, հայրիկն շտապեց դործարան, իսկ
Աշիկը՝ դպրոց:

Բանվոր Դավիդովին կուսակցությունն ուղարկել եր
կոլտնտեսությունը ղեկավարելու: Նա շտապում եր դաշտ:

— Լծիր, — ասաց նա պապին:

Ու չսպասելով — սկսեց ոգնել նրան:

Որն ամպ եր, քամի, անձրև եր կաթկթում: Դաշտը
դուլից տաս կիլոմետր հեռու յեր: Այնտեղ եր առաջին
բրիգադը, վեր վարած հողը ցածրանում եր:

— Շտապիր, պապի, — խնդրում եր նա:

— Ել վնչ շտապեմ, տես՝ ձին քրտինքի մեջ կորել է:

Բլրի առկով անցնում ելին աշակերտներն իրենց ու-
սուցչի հետ, նրանց հետևում ելին չորս սայլ՝ ջրի տա-
կաններով:

— Ես ել մեր մանրուքը, գնում են մկներին կոտո-
րելու, — մտրակով ցույց տվեց պապը:

Դավիդովը ժպտալով նայում եր: Յերբ մոտեցան, կանգ
առավ, նայեց, կանչեց յերեխաներից մեկին, յոթ տարեկան
մի-տղայի:

— Ինչո՞ւ գամ վոր, — խոսեց աղան՝ ծոծրակին իջեցնե-
լով հոր զլխարկը:

— Գանի՞ մուկ ես սպանել:

— Տասնչորս:

— Դե, նոտիր կողքիս — ման ածեմ:

— Դու ել նոտիր, — ասաց մի փոքրիկ աղջկա:

Շտրվեցին: Նա դարձավ տղային:

— Վնի՞ր դասաբանումն ես:

— Առաջին:

— Կարո՞ղ ես, մի անցիր մեր վարչություն... քեզ
կպատվեմ, կամենե՞ս կտամ, շոկոլադ կտամ, կանֆետ սի-
րում ես:

— Ինչի՞նչ և պետք: Ատամներս և փշացնում. ա՛յ, տես: Նա բայ արեց բերանը, և իսկապէս առջևի յերկու ատամներն ընկած ելին:

— Ուրեմն, ընկեր չան, դու անատամ ծերմեկ ես:

— Նո՛ւ դու յես անատամ. իմ ատամները կդան, իսկ քոնը՝ վնջ:

— Փչում ես. իմս եւ կդան, փնտ ե...

— Կդան, չե մի... մեծերի ատամները չեն բռնում:

Նա այդ ու ջառակեց սայլակից: Նրան հետեւեց աղջիկը. կարծես ճպուռներ լինեյին — ախպես ցատկոտում եյին:

Դավիթովը ժպտալով նայում եր. դեռ յերկար ժամանակ հեռվում կարմրին եր տալիս տղաչի գլխարկը: Նա իր կրծքի տակ ինչ-պէս ջերմություն եր զգում, աչքերը թաց եյին: Վէ՛տվ կյանք կիսողցենք — խոտը չկա. թող վազի հիմա այս մանչուկը՝ հոր գլխարկը գլխին: Իսկ մի 10—20 տաջի անց, երեկոթական խոփը շուռ ու մուռ կտա այս հողը: Նա ինձ նման չարքաշ չի լինի — մորս մահից հետո քրոջս եյի պահում, լվացք անում, ճաշ յեփում, գործարանս վազում: Այո, մեր յերեխաները բախտավոր կլինեն» — մտածում եր Դավիթովը՝ դիտելով կանաչին սփող անծայր դաշտը...

69. Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալին

Վրաստանում, Գուրգենի ափին կա մի քաղաք — Գորի: Մյուսեղ, կոշիակար Զուգաշվիլու ընտանիքում 1879 թ. ծնվեց Վիսարիոնի փոքրին՝ Իոսիֆը, փոր հետազայում դարձավ կոմունիստական կուսակցության, բանվոր դատարարի և ամբողջ աշխարհի աշխատավորության առաջնորդը Էնկ. Ստալինը շատ վաղ, 18 տարեկան հասակից սկսեց

հեղափոխական աշխատանքը: Նա բանվորներից խմբավաներ եր կազմակերպում, սովորեցնում եր նրանց պայքարել ցարի և տերերի դեմ:

Ցարական վատիկանությունից ծածկվելու համար նա դանադան անունների տակ եր թաղնվում, մեկ՝ Վրենկեր Դեմիդով, մեկ՝ Վրենկեր Կորա» և այլն: Նրան փնտրում են մի անունով, իսկ նա աշխատում ե մի ուրիշ տեղ՝ Չիժիկով անվան տակ: Գտնում են Չիժիկովի հետքերը, իսկ նա արդեն ուրիշ տեղ ե, ուրիշ անունով ե աշխատում:

Բայց և շատ անգամ ընկ. Ստալինն ընկել ե փոստիկանության ձեռքը, բանտ ե նստել, Սիբիր ե աքսորվել: Չորս անգամ փախել ե աքսորից, նորանոր մտանդություններ պատճառելով ցարական ժանդարմներին:

Ամբողջ ժամանակ ընկ. Ստալինը յեղել ե Լենինի հավատարիմ զինակիցն ու ողնականը:

Մեռավ Լենինը, Կոմկուսակցությունը շարունակում ե նրա գործը՝ ընկ. Ստալինի ղեկավարությամբ:

Ստալինը մեղ սովորեցնում ե. — մեր թշնամիները մոտ աշխատանքն անձձ ու պատուհաս ե, իսկ մեզ մոտ՝ պատվի, փառքի ու հերոսության գործ:

Ստալինը մեղ կոչ ե անում.

— Կորչեն ծուլերը, լողչները, գործախիբները.

Աշխատենք նոր ձևով, հարվածայնորեն.

Կեցցե Խորհրդային Իշխանությունն ամբողջ աշխարհում.

Կեցցե Կոմունիզմը:



70. Ինտերնացիոնալ

Յեղի՛ր, ում՝ կյանքը անիծել է,
 ով ճորտ է, մերկ է և ստրուկ:
 Արդեն վառվում են մեր սրտերը,
 արդեն կռվի յենք մենք ձգտում:

Այս հին աշխարհը կփոքեր մենք
 մինչև հիմքերը և հետո
 մեր նոր աշխարհը կշինենք մենք,
 ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե վերջին կռիվը
 և պայքարը մեր մեծ,
 Ինտերնացիոնալ
 աշխարհը կառնելու:



Յ Ա Ն Կ

	Եջ
1 Հոկտեմբերիկին. — Սլավոնից	3
2 Մեր Լենինը. — Մահարի	3
3 Իլյիչի մանկութունը. — Ըստ Մ. Ռիխմոնդայի	4
4 Բրդոս Խաղընկերը. — «Վուսաբեր»	6
5 Դաշտերում. — Խնկո-ապեր	8
6 Փոքրիկ ձկնորսներ. — Լ. Թադյուլ	9
7 Համարիկի նամակը. — Հ. Հայրապետյանից	10
8 Կռուկը. — «Շչակներ»	11
9 Անվերջ պատմութուն. — Խնկո-ապեր	12
10 Գիւրորի գրքերը. — Գիւր. Ռե. Չառենց	14
11 Շնճողուկն ու ծիծեռնակները. — Լ. Տոլսոյ	16
12 Կաղնու տնօրէնները. — «Վուսաբեր»	17
13 Հրդեհից ազատող շներ. — Լ. Տոլսոյ	18
14 Առյուծն ու աղվեսը. — Ըստ Ղ. Աղայանի	18
15 Միտն ու ծիծեռնակը. — Հ. Հայրապետյան	19
16 Սանժարար շունը	20
17 Հրդեհներ. — Գ. Մեսյան	21
18 Հոկտեմբեր. — Վ. Նորենց	22
19 Նազե. — Հաջիե-Ջեդի	22
20 Տրամվայ. — Վ. Նորենց	24
21 Պղնձի հանքերում. — Ըստ Ալազանի	25
22 Բրուտանոցում. — Ըստ Ա. Բակունցի	27
23 Հին դպրոցը. — Ըստ Ա. Բակունցի	28
24 Յորնատերն ու Չաղապարն. — Ար. Խնկոյան	30
25 Կարմիրն ու գալլը. — «Կարմիր արեւ»	32
26 Թևալորը. — Ս. Տոմպսոն	34
27 Մաքուր ողում. — Հ. Հայրապետյան	36
28 Նապատառները. — Լ. Տոլսոյ	36

29 Ինչպես սովորեցի ձե հեծնել.— ըստ Լ. Տոլսոյի	37
30 Գործարանում.— Հ. Հակոբյան	39
31 Սոյուժն ու շնիկը.— Լ. Տոլսոյ	40
32 Կատվի ձագը.— Լ. Տոլսոյ	41
33 Մանուկն ու ձյունը.— Գ. Սարյան	43
34 Ձմռան ճանապարհ.— Յե. Զիրիկով	44
35 Փոքրիկ գյուղացին.— Գրի. Խնկոյանի	45
36 Արջը.— Սե. Զորյան	46
37 Աղվեսը.— Հ. Թումանյան	49
38 Մանչուկն ու Կուտիկը.— Գրի. Պերն Պոռոյանի	51
39 Իշխերն անտառում.— Գրի. Սիմակի	52
40 Վոչ մի դալ մեր հանդերձում.— ըստ Վ. Անանյանի	54
41 Արարը.— Սե. Զորյան	57
42 Մշտական սառուցը.— ըստ Լ. Կասեկի	62
43 Լենին.— Ա. Վեսունի	65
44 1924 թ. հունվարի 21.—	65
45 Վլադիմիր Իլյիչի հետ սանատորիայում.— Վ. Սվետլովա	66
46 Բանտում.— Ա. Յելիզարովա	67
47 Վլ. Իլյիչ Լենին.—	68
48 Ո՞վ եմ յես.— Գ. Սարյան	71
49 Ծաղիկների յգրքը.— Հ. Թումանյանից	72
50 Գարո բիձու շերամապահությունը.— Հ. Թումանյան	74
51 Ճնճողուկ.— Տուրգենևով	75
52 Եշ և սոխակ.— Ղ. Աղայան	76
53 Աղվեսն ու իր ձագուկները.— Ս. Տոմպսոն	77
54 Դաշտի վարդը.— Գյոթելից	80
55 Բաբիկադի վրա.— Վ. Հյուգո	80
56 Մայիսյան յերթ.—	81
57 Մայիսի մեկն անցյալում.— ըստ Մ. Գորկու	82
58 Փոքրիկ հեղափոխականը.— Արագի	84
59 Սովորում են պաշտպանել յերկիրը.— ըստ Հայդարի	89
60 Արջի ու կատվի կռիվը.— Սեսոն-Տոմպսոն	92
61 Կռիվ գետի հետ.— ըստ Մաթեկի	94
62 Փոխքիկ.—	96
63 Վերադարձ.— Լորդկիսյանիձե	97
64 Բազուն անցյալում.— Մ. Մանվելյան	101

5 Բազուն ալժմ.— Մ. Գորկի.	101
66 Տեքստիլում	102
67 Կանաչ քաղաքում.— Միլսոյով	102
68 Նրանք բախտավոր են.— ըստ Շոլիսովի	105
69 Ի. Վ. Ստալին	106
70 Ինտերնացիոնալ	108

ՀՀ Ազգային գրադարան



NL0937616

ԳԻՆԸ 1 Ռ .40 Կ.

ԿԱԶՄԸ 35 Կ.

1934թ.-596

II

27930

Книга чтения

для начальных школ

II класс

Составил М. ДУРГАРЯН

Гиз. ССР Армении, Эривань, 1934 г.